

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

Երոպայի Ծանրակշիռ Զգուշացումները Պաքուին

Ատրպեյճանի նախագահ Իլհամ Ալիևի վերջին յայտարարութիւնները, որոնք կասկածի տակ կ'անցնեն Հայաստանի հողային ամբողջականութիւնը, կը մղեն Եւրոպական կառոյցները աւելի յստակ ու կտրուկ խօսքերով զգուշացնելու Պաքուին: Այդ շարքին ուշագրաւ էր Եւրոպական Սիուֆեան արտաքին յարաբերութիւններու եւ ապահովութեան հարցերով բարձր ներկայացուցիչ ժոզեփ Դորեթի հակադարձը, ուր ան կու գար յայտարարելու, որ Հայաստանի տարածքային ամբողջականութեան Որեւէ խախտում լուրջ հետեւանքներ պիտի ունենայ: «Հայաստանի տարածքային ամբողջականութեան որեւէ խախտում անընդունելի պիտի ըլլայ եւ լուրջ հետեւանքներ պիտի ունենայ Ատրպեյճանի հետ մեր յարաբերութիւններուն համար», ըսաւ Դորեթ: Եւրոպայի յայտարարութեամբ հանդէս եկաւ ԵՄ բարձրաստիճան մէկ այլ պաշտօնեան Փիթըր Սթանօ յայտնելով, որ Եւրոպական Սիուֆեան Ատրպեյճանին յստակ ուղերձներ կը փոխանցէ, որ այդ երկրին կողմէ Հայաստանի տարածքային ամբողջականութեան որեւէ խախտում անընդունելի է եւ ծանր հետեւանքներ պիտի ունենայ:


Այս շարքին պէտք է դասել նաեւ Ֆրանսայի Ծերակոյտի ընդունած բազմաբովանդակ բանաձեւը, ուր անդրադարձ կայ Հայութեան դիմագրաւած գլխաւոր հարցերուն: Գրեթէ միաձայնութեամբ եւ քաղաքական տարբեր հոսանքներ ներկայացնող բոլոր կուսակցութիւններուն կողմէ հաւանութեան արժանացած բանաձեւը կը յայտնէ աջակցութիւն Հայաստանի տարածքային ամբողջականութեան ու ինքնիշխանութեան, կը դատապարտէ Ատրպեյճանի կողմէ իր դաշնակիցներու աջակցութեամբ 2023-ի Սեպտեմբեր 19-ին եւ 20-ին իրականացուած ռազմական յարձակումը Լեռնային Ղարաբաղի դէմ, կոչ կ'ընէ Ատրպեյճանին երաշխաւորելու հայ բնակչութեան վերադարձի իրաւունքը Լեռնային Ղարաբաղ, կոչ կ'ընէ Ատրպեյճանական զօրքերուն եւ անոնց դաշնակիցներուն անյապաղ եւ անվերապահ դուրսբերումը Հայաստանի ինքնիշխան տարածքէն, կը նշէ, որ Հայաստանը իրաւունք ունի պաշտպանելու իր

Հայաստանը Կ'ողջունէ Ֆրանսայի Ծերակոյտին Բանաձեւը, Ատրպեյճանը Կը Քննադատէ Զայն

Ազգային Ժողովի նախագահ Ալէն Սիմոնեան շնորհակալութիւն յայտնած է Ֆրանսայի Ծերակոյտին ընդունած բանաձեւին համար՝ որակելով զայն «Հայաստանին եւ Հայ Ժողովուրդին աջակցող կարեւոր յանձնառութիւն»:

336 կողմ եւ 1 դէմ ձայներով ընդունուած փաստաթուղթին մէջ Ֆրանսայի օրէնսդիրները կառավարութեան կոչ կ'ընեն պատժամիջոցներ կիրառելու Ատրպեյճանի դէմ, այդ շարքին՝ կազմի եւ քարիւղի ներմուծման արգելք սահմանել: Բանաձեւով նաեւ կը պահանջուի Լեռնային Ղարաբաղ Հայ բնակչութեան վերադարձի իրաւունքի երաշխիքներ: Կոչ կը կատարուի հնարաւոր ամէն ինչ ընելու, որպէսզի Ատրպեյճանը հրատապ միանայ բանակցութիւններուն՝ Հարաւային Կովկասի մէջ կայուն խաղաղութեան հասնելու համար:

Նիստէն ժամեր անց կոչու հակադարձեց Պաքուն. Միլլի մեծ-



լիսի Միջազգային յարաբերութիւններու յանձնաժողովը պատասխան յայտարարութեամբ Ատրպեյճանի կառավարութեան կոչ կ'ընէ պատժամիջոցներ կիրառելու Ֆրանսայի դէմ, սառեցնելու Ֆրանսայի պաշտօնեաներու հաշիւները, դադարեցնելու տնտեսական կապերը Փարիզի հետ՝ Ֆրանսական բոլոր ընկերութիւնները դուրս բերելով

Ատրպեյճանէն: «Հակաատրպեյճանական» գնահատելով Փարիզի քաղաքականութիւնը՝ Պաքուն կը յայտարարէ, թէ երկու երկիրներուն յարաբերութիւնները պատմութեան մէջ ամենացած մակարդակի վրայ են, «ըստ էութեան, կրնան համարուիլ կասեցուած»:

Հայաստան Ատրպեյճանէն Կ'ակնկալէ Երաշխիքներ Եւ Պատրաստ Է Տալու Երաշխիքներ



Նիկոլ Փաշինեան իր կուսակիցներու հետ հանդիպման ընթացքին

Հայաստանը խաղաղութեան գործընթացին մէջ Ատրպեյճանէն կ'ակնկալէ թաքնուած տարածքային պահանջներ չունենալու երաշխիքներ եւ պատրաստ է փոխադարձաբար նոյն երաշխիքը տալու Ատրպեյճանին:

Այս մասին յայտնած է Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանը՝ «Քաղաքացիական Պայմանագիր» կուսակցութեան նախաձեռնող խումբի նիստին ժամանակ՝ ներկայացնելով, թէ ուր հասած է խաղաղութեան պայմանագրին շուրջ աշխատանքը:

«Աշխատանքը հասել է մի տեղ, որ մենք Ատրպեյճանից, Ատրպեյճանը մեզնից լրացուցիչ երաշխիքներ ենք ուզում, որ մենք փոխադարձաբար միմեանցից թաքնուած տարածքային պահանջ-

ներ ու նկրտումներ չունենք: Դիւանագիտական բնագրերը միշտ տարբեր շրջադարձեր, ենթադրեր, տողատակեր են ունենում: Եւ մենք Ատրպեյճանի, երեւի Ատրպեյճանն էլ՝ մեր, առաջարկների տողատակերում տարածքային պահանջները՝ եթէ ոչ այսօր, ապա հետագայ վտանգներ ենք տեսնում», ըսած է Փաշինեան:

Ըստ վարչապետին՝ իրադրութեանը կարելի է վերաբերիլ տարբեր կերպ, սակայն իրադրութեան պէտք է վերաբերիլ որպէս աշխատանքային գործընթաց, որ պէտք է շարունակել կառավարել, մինչեւ հարցերը պատասխան ստանան:

Վարչապետը կը համարէ, որ

Սպառազինութեան Ոլորտին Մէջ ՌԴ-ի Հետ Խնդիրները Մեծամասամբ Կարգաւորուած Են

Սպառազինութեան ոլորտին մէջ ռուսաստանեան ընկերութիւններու հետ ունեցած խնդրայարուց հարցերը մեծամասամբ կարգաւորուած են, սակայն շարք մը խնդիրներ կը շարունակեն մնալ չլուծուած, «Ազատութեան» գրաւոր հարցումին ի պատասխան յայտնած են Պաշտպանութեան նախարարութեան չլուծուած խնդիրները, որ արդեօք խօսքը 400 միլիոն տոլարի շրջանակին մէջ իրականացուած մատակարարումներուն մասին է:

Ռեցախեան երկրորդ պատերազմէն յետոյ Հայաստանի իշխանութիւնները ամենաբարձր մակարդակով կը դժգոհէին, թէ Ռուսաստանին միլիտարի տոլարներ փոխանցած են, սակայն զէնք չեն ստացած:

Ռուսաստանի դեսպանը, մինչդեռ, մէկ ամիս առաջ պնդած էր, թէ ռազմատեխնիկական համագործակցութեան ոլորտին մէջ Երեւանի եւ Մոսկուայի միջեւ կնքուած գրեթէ բոլոր պայմանագրերը աւարտած են ժամանակին:

Իշխանական պատգամաւորները միայն վերջերս յայտնեցին, որ Ռուսաստանը արդէն մատակարարումներ կ'իրականացնէ: Պաշտպանութեան յանձնաժողովի անդամ Գագիկ Մելքոնեան մօտ մէկ շաբաթ առաջ «Ազատութեան» ըսած էր, որ ռուսական զէնքի խմբաքանակ մը արդէն Հայաստան հասած է:

ԲԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Ատրպեյճանը Ձգտում է «Յադրոդի Խաղաղութիւն» Կնքել Հայաստանի Հետ

ՏԻՊՈՒՆ ԳՐԻՊՈՐԵԱՆ

Ատրպեյճանի նախագահ Իլհամ Ալիևը Յունուարի 10-ին հարցազրոյց տուեց ատրպեյճանական լրատուամիջոցներին, որի ընթացքում աղմկայարոյց բազմաթիւ յայտարարութիւններ արեց: Ալիևի հարցազրոյցը բուռն արձագանքի արժանացաւ Հայաստանում: Նրան օրեր անց հրապարակայնօրէն արձագանքեց Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանը՝ նշելով, որ Պաքուից հնչող յայտարարութիւնները լրջագոյն հարուած են խաղաղութեան գործընթացին:

Ատրպեյճանի նախագահը հարցազրոյցի ընթացքում մեծ հաշուով ընդամէնը կրկնեց այն թեզերը, որոնք վերջին ամիսների ընթացքում հնչեցուցած էին Պաքուի պաշտօնակազմի եւ ոչ պաշտօնակազմի խօսակների կողմից: Այնուամենայնիւ, այս հարցազրոյցի կարեւորութիւնն այն է, որ Ատրպեյճանի առաջնորդը յայտնի որոշ հանգամանքների մասին առաջին անգամ խօսեց ուղիղ տեքստով:

Ալիևի արած ակնառու յայտարարութիւններն առնչուած էին խաղաղութեան գործընթացի երեք կարեւոր ուղղութիւններին՝ սահմանային փաթեթ, ապաշրջափակում եւ պայմանագրի իմպլեմենտացիայի մեխանիզմ կամ երաշխաւորի ինստիտուտ:

Սահմանային փաթեթի վերաբերեալ Ալիևը հաստատեց այն թեզը, որը վերջին շաբաթների ընթացքում առաջ էր քաշուած խաղաղութեան գործընթացի մէջ ներգրաւուած ատրպեյճանցի այլ պաշտօնեաների կողմից՝ սահմանային գերազանցութեան հարցը: Ակնյայտ

նազատման գործընթացի շուրջ պայմանաւորութիւնները պէտք է տարանջատել խաղաղութեան պայմանագրի շուրջ ընթացող բանակցութիւններից:

Ալիևն ուղիղ տեքստով յայտարարեց նաեւ, որ 1970-ականներին ԽՍՀՄ գինուած ուժերի գլխաւոր շտապի քարտէզները չեն կարող սահմանազատման գործընթացի հիմք դառնալ: Երկարատեւ դադարից յետոյ Ալիևը յայտարարեց նաեւ այս գործընթացում պատմական քարտէզների օգտագործման անհրաժեշտութեան մասին եւ առաջին անգամ պարզաբանեց, որ խօսքը կա՛մ Հայաստանի եւ Ատրպեյճանի առաջին հանրապետութիւնների շրջանի, կա՛մ էլ երկու երկրների խորհրդայնացման ժամանակահատուածի քարտէզների մասին է:

Ալիևը հրապարակայնօրէն հնչեցրեց նաեւ սահմանային փաթեթին առնչուող մէկ այլ պահանջ, որը հաւանաբար հայկական կողմին է փոխանցուել նաեւ փակ ձեւաչափով: Խօսքը ԽՍՀՄ փլուզումից առաջ Ատրպեյճանական ԽՍՀ տարածքում ներառուած ութ գիւղերից չորս ոչ անկլաւային գիւղերի վերադարձի մասին է: Այստեղ տեսնում ենք, որ Ատրպեյճանը Հայաստանի վերահսկողութեան տակ գտնուող ութ գիւղերի խնդիրը բաժանել է երկու մասի: Ոչ անկլաւային գիւղերի վերադարձը Ատրպեյճանի հայելային պահանջն է Հայաստանին: Այն նպատակ է հետապնդում չէզոքացնել 2021 եւ 2022 թուականներին Հայաստանի օկուպացուած տարածքներից ատրպեյճանական զորքերի հետքաշման հարցը: Ակնյայտ

է, որ Ատրպեյճանը որեւէ պարագայում չի պատրաստուում լքել այդ տարածքները:

Ալիևի առանցքային միւս յայտարարութիւնն առնչուած էր ապաշրջափակման թեմային: Ատրպեյճանի նախագահն աւելի յստակ կրկնեց նախկինում արուած իր յայտարարութիւնն այն մասին, որ կա՛մ մայրցամաքային Ատրպեյճանը Մեղրիով Նախիջևանին կապող հաղորդակցութիւնը գործելու է առանց մաքսային ու սահմանային վերահսկողութեան, կա՛մ Հայաստանի եւ Ատրպեյճանի միջեւ որեւէ հաղորդակցութիւն ընդհանրապէս չի բացուելու: Յատկանշական է, որ Ալիևը վերջին ամիսների ընթացքում առաջին անգամ խօսեց այդ երթուղու վրայ անվտանգութեան ապահովման անհրաժեշտութեան մասին՝ յղում անելով 2020-ի Նոյեմբերի 9-ի յայտարարութեանը, այսինքն՝ ուսական ներկայութեան անհրաժեշտութեանը:

Խաղաղութեան պայմանագրի հետ ուղղակի առնչութիւն ունեցող միւս խնդիրը, որին անդրադարձ կատարեց Ալիևը, այսպէս կոչուած երաշխաւորի ինստիտուտն է: Ատրպեյճանի նախագահն այս հարցում եւս աւելի յստակ ու ուղիղ տեքստով հնչեցրեց այն, ինչ մինչ այդ յայտարարում էին Պաքուի ոչ պաշտօնակազմի խօսակները փորձագիտական դաշտից: Ատրպեյճանը փաստացիօրէն հրաժարուած է այդ մեխանիզմը ներառել փաստաթղթի մէջ եւ բացառում է երրորդ կողմերի ներգրաւուածութիւնը խաղաղութեան պայմանագրի հետ առնչութիւն ունեցող հարցերում:

Ատրպեյճանում իշխանամերձ փորձագէտներն այս դիրքորոշման

համար նոր հիմնաւորում են գտել՝ խաղաղութեան պայմանագիրը չպէտք է խախտի աշխարհաքաղաքական բալանսը Հարաւային Կովկասում եւ գործիք դառնայ Արեւմուտք-Ռուսաստանի դիմակայութեան մէջ: Սա հետաքրքրական հիմնաւորում է այն առումով, որ Հայաստանի իշխանութիւնները, արեւմտեան հովանու ներքոյ խաղաղութեան գործընթացի մէջ ներգրաւուելով, համոզուած էին, որ Երեւանն ու Պաքուն ունեն Ռուսաստանին տարածաշրջանից դուրս մղելու ընդհանուր շահ: Դիւանագիտական այս դիւետանտութեան հետեւանքն այն է, որ Ատրպեյճանը Ռուսաստանի լուրջացն համաձայնութեամբ հայթափել է Արցախը, արեւմտեան հարթակներից մաքսիմալ դիվիդենդներ ստանալուց յետոյ Արեւմուտքին գրկել է բանակցային գործընթացում առանցքային դերից, իսկ այժմ խօսում է տարածաշրջանում աշխարհաքաղաքական բալանսը խախտելու անթոյլատրելիութեան մասին:

Բանակցային գործընթացին ուղղակի առնչութիւն ունեցող յայտարարութիւններից բացի Ալիևը հարցազրոյցի ընթացքում շատ աւելի օգիտոյ ու մաքսիմալիստական յայտարարութիւններ է արել: Ուստի ամէնը տեղի է ունենում մի ժամանակահատուածում, երբ թէ՛ Պաքուն, թէ՛ Երեւանը խօսում են բանակցութիւններում առաջընթացի մասին: Սա նշանակուած է արդեօք, որ Պաքուն խոչընդոտում է

Շար.ը էջ 8

Չինաստանի Միջուկային Հետաքրքրութիւնը Հայաստանում

ՅԱԿՈՒ ԲԱՂԱԵԱՆ

Անցնող շաբաթ տեղի ունեցաւ մի իրադարձութիւն, որը անվտանգային, քաղաքական հարցերի թոհուբոհում մնաց ստուերում, թէեւ իր էութեամբ թերեւս ոչ միայն բաւականին քաղաքական է, այլ աշխարհաքաղաքական: Հայաստանում Չինաստանի դեսպանը այցելել էր Հայաստանի ատոմային էլեկտրակայան՝ ճանաչողական այցով, ինչպէս նշուել էր հաղորդագրութեան մէջ: Թէ՛ յատկապէս ի՞նչն էր ուղղում «ճանաչել» չինացի դիւանագետը, պարզ չէ, սակայն ինքնին բնութագրումը յատկանշական է, հաշուի առնելով մի շարք հանգամանքներ հայկական ատոմակայանի թէ՛ կենտրոնի, թէ՛ քաղաքական, թէ՛ տեխնոլոգիական նշանակութեան իմաստով:

Ի վերջոյ, հայկական ատոմակայանի շահագործումը երկարաձգուած է հերթական անգամ, իսկ դա ամենեւին էլ սովորական տեխնոլոգիական ցիկլ չէ խաղաղ ատոմային էներգիայի բնագաւառում: Խօսել հայկական ատոմակայանի քաղաքական, ընդհուպ ուղղաքաղաքական նշանակութեան մասին, երեւի թէ նոյնպէս աւելորդ է: Դէ, իսկ այն, որ Հայաստանի էներգետիկ անվտանգութեան հարցում ՀԱԷԿ-ն ունի շոշափելի եւ առանձնապատուկ դեր, նոյնպէս կասկածիք վեր է: Այդ բաղադրիչներից յատկապէս ի՞նչն է հետաքրքրել Չինաստանի դեսպանին, պարզ չէ, սակայն ան-

կասկած է, որ Հայաստանի ատոմակայանի հանդէպ Փեքինի հետաքրքրութիւնը՝ որ դրսեւորուած է դեսպանի մակարդակով, վկայում է Հայաստանի եւ գուցէ ընդհանրապէս ռեգիոնալ անվտանգութեան հարցերում Փեքինի համապարփակ ուշադրութեան մասին:

Ըստ հաղորդագրութեան, դեսպանը ատոմակայանի ղեկավարութեան հետ քննարկել է նաեւ միջուկային էներգետիկայի բնագաւառում հնարաւոր գործակցութեան հարցեր: Մեծ հաւանականութեամբ, գործող ատոմակայանը Չինաստանի համար աւելի շուտ «ինֆորմացիոն առիթ» է, իսկ բուն հետաքրքրութեան առարկան կարող է լինել Հայաստանում նոր ատոմակայանի կառուցման հարցը, որ պարբերաբար քննարկուած է աշխուժօրէն եւ այդ քննարկումները ծաւալուեցին նաեւ օրերս, երբ թեմային անդրադարձել էր վարչապետ Նիկոլ Փաշինեանը: Հայաստանին «մոտուլային ռեակտորներ» առաջարկ ունենալու մասին խօսել են ամերիկացի դիւանագետներ: Ռոսատոմը իր հերթին Հայաստանին առաջարկում է նոր ատոմակայանի շուրջ բանակցութիւններ:

Արդեօք Չինաստանը ունի մտադրութիւն «մտնել» այդ գոր-

ծընթացի մէջ եւ իր հերթին ունի առաջարկներ Հայաստանին, կամ այդպիսիք մշակելու եւ ներկայացնելու մտադրութիւն, ինչի համար էլ Չինաստանի դեսպանը ստացել է Հայաստանի ատոմակայան «ճանաչողական այց» կատարելու յանձնարարութիւն: Չինաստանը ունի ատոմային էներգետիկայի զարգացման ծրագիր, թէեւ ներկայումս իհարկէ Չինաստանի էներգետիկ համակարգում ատոմակայանների տեսակարար կշիռը փոքր է՝ 4.9 տոկոս: Այդուհանդերձ, Փեքինը ծրագրում է մինչեւ 2030 թուականը եռապատկել իր միջուկային էներգետիկայի հզորութիւնը: Չինաստանն ունի միջուկային էներգետիկայով զբաղուող երեք խոշոր ընկերութիւն. China National Nuclear Corporation-ը, որը Չինաստանի ազգային միջուկային էներգետիկայի գործակալիւն է, China General Nuclear Power Group, որն աշխատում է հիմնականում Չինաստանի հարաւ-արեւելքում եւ մասնագիտանում է ֆրանսական միջուկային տեխնոլոգիաները իւրացնելու մէջ, եւ State Power Investment Corporation-ը, որը մասնագիտանում է ամերիկեան միջուկային տեխնոլոգիաները իւրացնելու մէջ:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժնէր հոն արտայայտուող բոլոր տեսակետները

ՄԱՍԻՍ
ՇԱՐԱԹ ԱՌԵՐԹ
ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ
ՄՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻՊՈՐ ԽՆՏԱՆԵԱՆ
ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՐԷ ԱՁԱՊԱՐԵԱՆ
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

Փաշինեանի Կարծիքով Հայաստանը Կարիք Ունի Նոր Սահմանադրութեան



Վարչապետ Փաշինեան Արդարադատութեան նախարարութիւնի անդամներու հետ հարցազրոյցի ընթացքին

Վարչապետ Նիկոլ Փաշինեան Յունուար 18-ին այցելած է Արդարադատութեան նախարարութիւն՝ գերատեսչութեան 2023 թուականի գործունէութեան հաշուետուութիւնը քննարկելու նպատակով:

Մինչ քննարկումը՝ վարչապետը կատարած է երկու շեշտադրում: «Առաջինը՝ Արդարադատութեան նախարարութիւնը ներգրաւուած է սահմանադրութեան յանձնաժողովի աշխատանքներում: Ուզում եմ սահմանադրութեան գործընթացի ռազմավարական նշանակութիւնը ընդգծել, որովհետեւ այստեղ, ի հարկէ, կան շատ լուրջ եւ քաղաքական, եւ ընկերահոգեբանական, եւ անվտանգային հարցեր: Հասկանալիօրէն եւ ակնյայտօրէն մենք պարտու ենք մի աշխարհում, որը շատ մեծ արագութեամբ եւ անկասխատեսելի ուղղութիւններով փոխուած է, եւ շատ կարեւոր է, ի վերջոյ, պատասխանել հետեւեալ հարցին՝ իսկ որո՞նք է Հայաստանի Հանրապետութեան անվտանգութեան ապահովման մեր տեսլականը եւ բանաձեւը: Մենք այս հարցի շուրջ բազմիցս ենք

քննարկումներ ունեցել ամենատարբեր ձեւաչափերով, եւ իմ եզրակացութիւնն այն է, որ Հայաստանի Հանրապետութեան անվտանգութիւնն ապահովելու անկիւնաքարը օրինականութիւնն է: Ի՞նչ է սա նշանակում: Սա նշանակում է, որ մենք պէտք է ձեւակերպենք խնդիրը շատ յստակ, ի հարկէ խնդիրը կամ ձեւակերպումը շատ ակնյայտ է, բայց մենք պէտք է սա չզլանանք վերաբարձանագրել, իսկ արձանագրումը հետեւեալն է, որ մենք խնդիր ենք դնում, որ Հայաստանի Հանրապետութիւնն իր միջազգայնօրէն ճանաչուած տարածքում կայանայ, զարգանայ՝ որպէս իրաւական, ժողովրդավարական պետութիւն: Եւ սա պէտք է լինի մեր երկրի ապագայի ռազմավարական ընկալումը՝ Հայաստանի Հանրապետութիւնը որպէս ինքնիշխան, իրաւական, ժողովրդավարական պետութիւն, եւ ընկերային պետութիւն: Ի հարկէ այս թուարկումը կարելի է շարունակել, բայց ես խօսում եմ այս պահին առաջնային ուղղութիւնների մասին:

Ամուլսարի Հանգի 12,5 Տոկոսը Պիտի Անցնի Հայաստանի Կառավարութեան

Ամուլսարի հանգավայրը շահագործող «Լիդիան Արմէնիա» փակ բաժնետիրական ընկերութիւնը Հայաստանի կառավարութեան նուիրաբերած է իր բաժնետոմսերուն 12,5 տոկոսը: Կառավարութեան Յունուար 18-ին նիստին համապատասխան նախագիծը ներկայացուց տնտեսութեան նախարարի տեղակալ Անի Իսպիրեանը:



Ան յիշեցուց, որ 2023 թուականին կառավարութեան, Եւրասիական զարգացման դրամատան եւ «Լիդիան Արմէնիա» փակ բաժնետիրական ընկերութեան միջեւ կնքուած է փոխըմբռնման յուշագիր: Յուշագրով նախատեսուած է դիտարկել Ամուլսարի հանգավայրի նախապատրաստական, շինարարական եւ հետագայ շահագործման աշխատանքներու շարունակման հնարաւորութիւնը: «Ծրագրի արդիւնաւէտ իրագործման համար «Լիդիան Արմէնիա» ընկերութիւնը պարտաւորուած է ապահովել առնուազն 250

միլիոն տոլարի չափով ներդրումներ: Ծինարարութեան ընթացքում «Լիդիան Արմէնիա» ընկերութիւնը պարտաւորուել է վճարուող բնապահպանական հարկից ազդակիր համայնքներին բնապահպանական ծրագրերի իրականացման համար մասհանումներից բացի տրամադրել նաեւ 7 միլիոն տոլարի չափով տարեկան ֆինանսական աջակցութիւն իւրաքանչիւր 12 ամեայ ժամանակահատուածի համար: «Յուշագրի շրջանակներում ընկերութիւնը պարտաւորուել է նաեւ կառավարութեանը նուիրատուութեամբ տրամադրել «Լիդիան Արմէնիա» ընկերութեան կանոնադրական դրամատուլիի 12,5 տոկոս բաժնետոմսերը: Նախագիծով առաջարկուած է ընդունել յուշագ-

Ըստ Դատախազին՝ Գազիկ Խաչատրեան Փորձ Կը Կատարէ Նիստը Խոչընդոտելու

Պետական Եկամուտներու կոմիտէի (ՊԵԿ) նախկին նախագահ Գազիկ Խաչատրեան մօտ կէս ժամ ուշացաւ իր դատավարութենէն: Փաստաբանը ըսաւ, որ սալակով տեղաշարժող պաշտպանեալը հիւանդանոցն էր:



ՊԵԿ նախկին նախագահ Գազիկ Խաչատրեան

«Ինչ տեղեկացրին, որ ներերակային ներարկում պէտք է կատարուի, որը խնդիրներ է յառաջացնում երակների բարակութեան եւ այլնի հետ կապուած, իրենց բառերով ասած՝ չի ստացւում այս պահին, դրա համար մի քիչ ձգձկում է», ըսաւ Երեմ Սարգսեանը:

Խաչատրեան դատարան եկաւ շտապօգնութեան մեքենայով՝ բժիշկներու ուղեկցութեամբ, ու նիստը չսկսած փաստաբան Երեմ Սարգսեանը խնդրեց ընդմիջել գայն, որ պաշտպանեալին ներարկում ընեն:

Խաչատրեանի փաստաբանը յայտարարեց՝ ողնաշարի լուրջ խնդիրներ ունեցող պաշտպանեալը Հայաստանի մէջ չեն կրնար վերահատել, իսկ Գազիկ Խաչատրեանը չի կրնար երկար նստած մնալ՝ ցաւերը կը սաստկանան: Ըստ Երեմ Սարգսեանի՝ նոյնիսկ պետական յանձնաժողովներու բժիշկները լուրջ գնահատած են անոր վիճակը:

Դատախազութիւնը բազմիցս յայտարարած է՝ նման բնագրերով մեղադրեալը ամէն անգամ նիստերը կը յետաձգէ: Դատախազ Գէորգ Սարգսեանը ըսաւ՝ նոյնիսկ հաշիւը կորսնցուցած են:

«Եթէ Դուք չէք ծրագրաւորում խոչընդոտել դատական նիստի բնականոն ընթացքը, եթէ չի ծրագրաւորել պաշտպանութեան կողմը, որ որեւէ իքս պահի պէտք է դատական նիստը վատաւող լինելու պատճառաբանութեամբ ընդհատուի եւ չշարունակուի, եթէ չկայ նիստի ձախողում ծրագրաւորած պաշտպանութեան կողմից, ապա բնական է՝ որեւէ խոչընդոտ չկայ այս պայմանում, որ Սեդրակ Առուստամեանը հարցաքննուի, եւ յետոյ արդէն պաշտպանութեան կողմից միջնորդութիւն ներկայացուի»,

ըսաւ դատախազը:

Հայաստանեան իրաւապահները 6 տարի մաքսային եւ հարկային ծառայութիւնները, եւս երկու տարի ալ Երեւանի նախարարութիւնը ղեկավարած 68-ամեայ Խաչատրեանը կը մեղադրեն չարաչանման, վատնում կատարելու, փողերու լուսացման օժանդակելու, պաշտօնէական լիազօրութիւնները չարաչանելու, կաշառք ստանալու, պաշտօնէական կեղծիքներ կատարելու համար: Ընդհանուր առմամբ, Խաչատրեանի գործողութիւններուն հետեւանքով պետութեան պատճառուած վնասը եւ կաշառքի չափը կը կազմէ աւելի քան 41 միլիոն տոլար:

Այս գործով վկայ Սեդրակ Առուստամեանը նոյն այս դրուագով նաեւ մեղադրեալ է: Ըստ իրաւապահներուն՝ «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան առաջնորդ Գազիկ Մառուկեանի առեւտրային կայրութեան ղեկավարը Գազիկ Խաչատրեանին աւելի քան 22 միլիոն տոլար կաշառք տուած է, որ «Մուլթի Կրուփը» խոչընդոտներ չունենայ հարկային դաշտին մէջ:

Աւելի վաղ Խաչատրեանի փաստաբանը պնդած էր, որ այդ գումարը Առուստամեանը պարտքով տուած է, որ Խաչատրեանի որդիները Լոս Անճելըսի մէջ առանձնատուն գնէին:

ՀՀ Կառավարութեան Կը Հերքեն Մեղրին Դատարկելու Մասին Տարածուող Լուրերը

Կազմի ղեկավարի տեղակալ Տարօն Չախոյեանը հերքած է լուրերը, թէ իշխանութիւնները կը պատրաստուին Մեղրին դատարկելու: Ան շեշտած է, որ այդ լուրերը կեղծ են, անհիմն եւ իրականութեան հետ աղբրս չունին:

րի համար: Մեղրիում պետական միջոցներով այս տարի կը սկսուի նոր դիտարկման կառուցման շինարարութիւնը»:

Յետգրութեամբ Չախոյեան ընդգծած է՝ իշխանութիւնը միայն մէկ բան կրնայ յանձնել. Մեղրին «դատարկելու» մասին կեղծ լուրերը տարածողները հանրութեան դատին:

Անդրադառնալով Մեղրիի մէջ պետական կառուցները փակելու մասին տարածուող լուրերուն՝ կառավարութեան անդամը յիշատակած է այն աշխատանքները, որոնք կառավարութիւնը կ'իրականացնէ եւ կը պատրաստուի իրականացնելու Մեղրիի մէջ:

Աւելի վաղ «Հայկական ժամանակ»-ի հետ զրոյցին, Մեղրիի համայնքապետ Բագրատ Չաքարեան վրդովմունք յայտնած էր համայնքը «դատարկելու» մասին վերջին օրերուն շրջանառուող կեղծ լուրերուն վերաբերեալ: Ըստ անոր՝ այն անձը, որ տեղեկութիւններ կը տարածէ, թէ Մեղրին շուտով պիտի դատարկուի, պետութեան, անոր անվտանգութեան թշնամին է:


«Մեղրիում կառուցուած է նոր մաքսակէտ 21 միլիոն եւրօ վարկային եւ դրամաշնորհային միջոցներով: Մեղրիում կառուցուելու է ոստիկանութեան ստորաբաժանման տիպային շէնք, որը օրինակելի է լինելու միւս ստորաբաժանումներին»:

րից բխող բաժնետոմսերի նուիրատուութիւնը», ըսաւ Իսպիրեան: Միաժամանակ, նախագիծով կը նախատեսուի բաժնետոմսերու կառավարման լիազօրութիւնը վերա-

պահել Տնտեսութեան նախարարութեան, եւ նշեալ նուիրատուութիւնը ընդունելու համար Տնտեսութեան նախարարութիւնը պիտի կնքէ համապատասխան պայմանագիր:

ԼՈՒՐԵՐ

Նիկոլ Փաշինեան Եւ Խալիեր Քոլոմբինա Քննարկած Են Հայաստան-ՆԱԹՕ Համագործակցութեան Առնչուող Հարցեր



Նիկոլ Փաշինեան կ'ընդունի ՆԱԹՕ-ի գլխաւոր քարտուղարի յատուկ ներկայացուցիչ Խալիեր Քոլոմբինան

Վարչապետ Նիկոլ Փաշինեան ընդունած է Կովկասի եւ Կեդրոնական Ասիոյ մէջ ՆԱԹՕ-ի գլխաւոր քարտուղարի յատուկ ներկայացուցիչ Խալիեր Քոլոմբինան: Զրուցակիցները քննարկած են Հայաստան-ՆԱԹՕ համագործակցութեան, ինչպէս նաեւ տարածաշրջանային եւ միջազգային անվտանգութեան առնչուող հարցեր:

Վարչապետը անդրադարձած է Հարաւային Կովկասի մէջ անվտանգային իրավիճակին, Հայաստան-Ատրպէյջան յարաբերութիւններու կարգաւորման գործընթացի վերջին զարգացումներուն ու խաղաղութեան գործընթացին՝ համա-

ձայն նախապէս համաձայնեցուած հանրայն սկզբունքներուն:

Զրուցակիցները մտահոգութիւն յայտնած են Ատրպէյջանի նախագահի վերջին յայտարարութիւններուն առնչութեամբ, որոնք կը հակասեն բանակցութիւններու ամբողջ տրամաբանութեան եւ կը նպաստեն տարածաշրջանին մէջ լարուածութեան:

Այս ծիրին մէջ, վարչապետը կարեւորած է միջազգային հանրութեան հասցեական արձագանգն ու գործողութիւններուն անհրաժեշտութիւնը՝ ուղղուած Հարաւային Կովկասի մէջ կայունութեան ու խաղաղութեան:

«Ձանգեզուրի Սիջանցքի» Մասին Երբեք Խօսք Չէ Եղած. Լաւրով

Ռուսաստանի, Հայաստանի եւ Ատրպէյջանի ղեկավարներու եռակողմ պայմանաւորուածութիւններու շրջանակին մէջ երբեք խօսք չէ եղած «Ձանգեզուրի միջանցքի» մասին: Այս մասին մամուլի ասուլիսի ժամանակ յայտարարած է Ռուսիոյ արտաքին գործերու նախարար Սերգէյ Լաւրովը՝ մեկնաբանելով հայ-ատրպէյջանական կարգաւորման շուրջ ստեղծուած իրավիճակը:



Ռուսիոյ արտաքին գործերու նախարար Սերգէյ Լաւրով

Խաւորէ Ատրպէյջանի արեւմտեան շրջաններու եւ Նախիջևանի միջեւ ճանապարհային հաղորդակցութեան անվտանգութիւնը երկու ուղղութիւններով, իսկ այդ ճանապարհային հաղորդակցութեան նկատմամբ վերահսկողութիւնը կ'իրականացնեն Ռուսիոյ ԱԴՄ սահմանապահ ծառայութեան մարմինները:

«Սա մէջբերում է այն փաստաթուղթին, որ եռակողմ ձեւաչափով ստորագրուած է 2020 թուականի Նոյեմբեր 9-ին», ըսած է Լաւրովը:

«Իսկապէս, վերջին օրերուն Հայաստանի եւ Ատրպէյջանի ղեկավարները իրենց հրապարակային մեկնաբանութիւններուն մէջ անդրադարձած են Ատրպէյջանի եւ Նախիջևանի միջեւ կապեր հաստատելու թեմային: Փաշինեան ըսած է, որ Հայաստանը կտրականապէս դէմ է «Ձանգեզուրի միջանցքին»: «Ձանգեզուրի միջանցքի» մասին երբեք խօսք չէ գացած այն պայմանաւորուածութիւններու շրջանակին մէջ, որոնք ձեռք բերուած են նախագահ Փութինի, Ալիեւի եւ Փաշինեանի կողմէ», ըսաւ ան:

Անոր խօսքով՝ 2020 թուականի Նոյեմբեր 9-ին ստորագրուած յայտարարութեան մէջ, որ դադրեցուցած է պատերազմը, ըսուած է, որ բոլոր տնտեսական եւ ճանապարհային փոխադրութեան կապերը պիտի ապաշրջանադարձուին: Միաժամանակ Հայաստանը կ'երաշ-

Հայաստանը Պէտք է Փորձէ Գտնել Նոր Դաշնակիցներ, Գործող Սեխանիզմները Չարդարացուցին. Միրզոյեան



ՀՀ արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեան դիւանագիտական տարուան ամփոփիչ ասուլիսի ժամանակ

2023 թուականի դիւանագիտական տարուան ամփոփիչ ասուլիսի ժամանակ ՀՀ արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեան յայտնեց, որ Հայաստանը պէտք է փորձէ գտնել նոր դաշնակիցներ: Սա, ըստ անոր, պայմանաւորուած է անով, որ երկիրը փարատ է իր անվտանգային մտահոգութիւնները:

Միրզոյեան նշեց, որ գործարկուած են մեխանիզմներ, որոնք աւելացուցած են անվտանգութեան աստիճանը: «Մենք այդպիսին ենք գնահատում ԵՄ առաքելութիւնը, այդպիսին ենք գնահատում մեր սերտ գործընկերների յայտարարութիւնները, օրինակ՝ Իրանի ու բազմաթիւ այլ երկրների, կազմակերպութիւնների հետ», ըսած է ան:

Միրզոյեանի խօսքով՝ Հայաստանը բախած է իրավիճակի մը, երբ դաշնակցային գործող մեխանիզմները չարդարացուցին ակնկալիքները:

Նախարար Միրզոյեան՝ նշեց, որ ՀՀ-ի համար հետագայ սահմանազատման գործընթացին մէջ առաւելագոյն յստակութիւնը, ընդ որում՝ իրաւական առումով, առանցքային է:

Այս ծիրին մէջ Միրզոյեանը համեմատականներ տարաւ Ալմաթիի հռչակագրին հետ, որով Խորհրդային Միութեան 12 հանրապետութիւններ պայմանաւորուած են եւ ընդունած, որ նախկին խորհրդային սոցիալիստական հանրապետութիւններուն միջեւ վարչական սահմանները, կը ճանչցուին բոլորին կողմէ՝ որպէս նորանկախ պետութիւններու միջեւ միջպետական սահմաններ:

«Սա բաւականին առանցքային համաձայնութիւն է, որի մասին,

բացի նրանից, որ 1991-ին պայմանաւորուել են Հայաստանը եւ Ատրպէյջանը եւ միւս հանրապետութիւնները, Հայաստանի եւ Ատրպէյջանի ղեկավարներն էլ, ըստ հուլիսեան, վերահաստատել են, օրինակ, 2022 թուականի Հոկտեմբերի 6-ին Փրակում եւ հետագայ մի շարք հանդիպումների ընթացքում», ըսաւ նախարարը:

Խօսելով Թուրքիոյ հետ սահմանի բացման մասին Միրզոյեան յայտնեց, որ Թեհրանի մէջ Հայաստանի արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեանը եւ Թուրքիոյ արտաքին գործերու նախարար Հաքան Ֆիտաւը վերահաստատած են Հայաստան-Թուրքիա սահմանի՝ բերրող երկիրներու քաղաքացիներու եւ դիւանագիտական անցակիր կրողներու համար բանալու պայմանաւորուածութիւնը, սակայն այս մասով մինչ այժմ արդիւնք չկայ:

«Քննարկման առարկայ եղել է եւ համաձայնութիւն ձեռք բերուել է այն մասին, որ ցամաքային սահմանը բացուի բերրող երկրների քաղաքացիների համար եւ Հայաստանի ու Թուրքիայի այն քաղաքացիների համար, ովքեր ունեն դիւանագիտական անցագրեր: Նաեւ այս պայմանաւորուածութիւնն ենք մենք վերահաստատել նախարար Ֆիտաւի հետ Հոկտեմբերի 23-ին Թեհրանում: Ինչպէս կարող էք տեսնել, մինչ օրս շօշափելի եւ առարկայական քայլեր այս ուղղութեամբ կամ չեն արուել, կամ վերջնական արդիւնք չկայ: Այդ սահմանը նշուած իմբի մարդկանց համար բաց չէ», ըսաւ Միրզոյեան:

ԵԽԽՎ-Ը Ատրպէյճանական Պատուիրակութեան Լիազօրութիւնները Սահմանափակելու Գործընթաց Սկսած Է

Եւրոպայի Խորհուրդի Խորհրդարանական Վեհաժողովը (ԵԽԽՎ) ատրպէյջանական պատուիրակութեան լիազօրութիւնները սահմանափակելու գործընթաց սկսած է: Այս մասին հաղորդած է ատրպէյճանական «Թուրան» գործակալութիւնը՝ նշելով, որ Վեհաժողովի պատուիրակներուն մեծամասնութիւնը կողմ քուէարկած է ընկերվարականներու, ժողովրդավարականներու եւ կանաչներու խմբակցութեան ներկայացուցիչ, գերմանացի սոցիալ-դեմոկրատ ֆրանք Շվապէի առաջարկութեան:

Ատրպէյջանական լրատուամիջոցին փոխանցմամբ՝ Շվապէն

իր առաջարկութիւնը պատճառաբանած է Ատրպէյջանի իշխանութիւններու վարած քաղաքականութեամբ, որ «կը հակասէ Եւրոպայի Խորհուրդի սկզբունքներուն»:

Գերմանացի պատգամաւորը նաեւ նշած է, որ ատրպէյջանցի պատուիրակներու լիազօրութիւնները պէտք է սահմանափակուին, քանի որ Պաքուն 2023 թուականին չէ թոյլատրած ԵԽԽՎ զեկուցողներուն այցելել Լաչինի միջանցք:

«Հարցը փոխանցուած է ԵԽԽՎ դիտորդական յանձնաժողով, որ վերջնական որոշում կայացնելու համար 24 ժամ ունի», կը տեղեկացնէ «Թուրան»-ը:

Նախագահ Խաչատուրեան Սամանթա Փաուլըրի Յետ ՔՆՆարկած Է Տարածաշրջանի Իրադրութիւնը



Նախագահ Վահագն Խաչատուրեան USAID-ի ղեկավար Սամանթա Փաուլըրի հետ

Տաւուսի համաշխարհային տնտեսական համաժողովի շրջանակներուն մէջ Հայաստանի նախագահ Վահագն Խաչատուրեան հանդիպում ունեցած է ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալութեան (USAID) ղեկավար Սամանթա Փաուլըրի հետ:

Հանդիպման ընթացքին քննարկուած են հարակից վիճակները տարածաշրջանի ընդհանուր իրադրութիւնն ու առկայ մարդասիրական մարտահրաւէրները:

Անդրադարձ կատարուած է Գործակալութեան ղեկավարի տարածաշրջանային վերջին այցի արդիւնքներուն:

Հանրապետութեան նախագահը վերստին ընդգծած է կայուն եւ տեւական խաղաղութեան հասնելու Հայաստանի սկզբունքային դիրքորոշումը եւ նշած է, որ խաղաղութեան գործընթացը այլընտրանք չունի:

Զրոյցի ընթացքին երկուս-

տեք շեշտուած է մարդասիրական խնդիրներու լուծման ուղղութեամբ ջանքերու համատեղման կարեւորութիւնն ու հետագայ քայլերուն անհրաժեշտութիւնը: Այս ծիրին մէջ միտքեր փոխանակուած են ՀՀ կառավարութեան եւ Գործակալութեան ձեռք բերուած պայմանաւորուածութիւններու կատարման վերաբերեալ, ինչին առնչութեամբ Սամանթա Փաուլըրը վերահաստատած է համագործակցութեան շրջանակներու ընդլայնման ուղղութեամբ կազմակերպութեան պատրաստակամութիւնը:

Զրուցակիցները բարձր գնահատած են նաեւ շուրջ երեք տասնամեակ Հայաստանի եւ «USAID»-ի միջեւ առկայ սերտ համագործակցութիւնը եւ կարեւորած են նպատակային փոխգործակցութեան հետագայ խորացման ուղղուած համատեղ քայլերու շարունակականութիւնը:

Հայաստանի Եւ Ղազախստանի Միջեւ Պաշտպանական Ոլորտին Մէջ Համագործակցութեան Ծրագիրը



Ծայաստանի եւ Ղազախստանի պաշտպանութեան նախարարներու հանդիպումը

Յունուար 23-ին՝ Հայաստանի պաշտպանութեան նախարար Սուրէն Պապիկեան այցելեալ է Ղազախստան, ուր տեղի ունեցած է Ղազախստանի պաշտպանութեան նախարար, զօրավար-գնդապետ Ռուսլան Ժաքսիլիքովի հանդիպումը՝ ընդլայնուած կազմով:

Հանդիպման ընթացքին քննարկուած են հայ-ղազախական պաշտպանական համագործակցութեան առնչուող, անվտանգային եւ փոխադարձ հետաքրքրութիւններ-

կայացնող այլ հարցեր: Երկուստեք արձանագրուած է համագործակցութեան զարգացման մեծ ներուժը, պայմանաւորուածութիւն ձեռք բերուած է համագործակցութեան հետագայ զարգացման վերաբերեալ:

Հանդիպման աւարտին պաշտպանութեան նախարարները ստորագրած են Հայաստանի Հանրապետութեան եւ Ղազախստանի Հանրապետութեան պաշտպանութեան նախարարութիւններ-

Երտողանը Պաքուէն Ազդանշանի Կը Սպասէ Հայաստանի Յետ Յարաբերութիւնները Կարգաւորելու Համար. Թոմաս Տէ Վաալ

2024 թուականին Հայաստան-Թուրքիա յարաբերութիւններու կարգաւորումը հնարաւոր է, էրտողանը Պաքուէն կը սպասէ: Ermenihaber.am-ի հետ զրոյցին նման կարծիք յայտնած է «Քարնեկի» հիմնադրամի աւագ փորձագէտ, Հարաւային Կովկասի խնդիրներով զբաղող բրիտանացի հետազոտող Թոմաս տէ Վաալը:

Բրիտանացի հետազոտողը նախորդ տարի «Քարնեկի» հիմնադրամի կայքին մէջ տեղ գտած «Հայաստանի անապահովութեան տարին» վերնագրով իր յօդուածին մէջ 2023 թուականի լաւատեսական բեմադրութիւններու շարքին մատնանշած էր Հայաստան-Թուրքիա յարաբերութիւններու կարգաւորումը եւ որպէս անոր նպաստող գործօն ներկայացուցած էր Թուրքիոյ մէջ Նախագահական եւ Խորհրդարանական ընտրութիւններուն ընդդիմութեան հնարաւոր չափմանակը:

Սակայն այդ ամէնը տեղի չունեցաւ, եւ Անգարան կը շարունակէ նոր նախապայմաններ ներկայացնել Հայաստանին, որոնցմէ, թերեւս, գլխաւորն է Պաքուի հետ խաղաղութեան պայմանագրի կնքումը:

Ermenihaber.am-ը վերլուծաբանէն հետաքրքրուած է, թէ արդեօք ան 2024 թուականի համար կը շարունակէ՞ հնարաւոր համարել յարաբերութիւններու կարգաւորումը երկու երկիրներուն միջեւ:

«Կը կարծեմ՝ այդ հնարաւոր է, կը կարծեմ՝ էրտողանը կը սպասէ Ատրպէյճանին: Թուրքիոյ նախապայմանները փոխուած են տարիներու ընթացքին: Կը յիշէ՞ք՝ 10-15 տարի առաջ Թուրք պաշտօնեաները կ'ըսէին, թէ բաւական է, եթէ հայկական զօրքերը դուրս բերուին թէկուզ միայն մէկ շրջանէ, միայն Ֆիզուլիէն (Վարանդա-Խմբ.) կամ միայն Ճապրայիլէն (Ջրական-Խմբ.), եւ իրենք կը կարգաւորեն յարաբերութիւնները: Յետոյ կորսուեցաւ ոչ թէ մէկ, այլ եօթը շրջան, կորսուեցաւ Ղարաբաղը, տակաւին չկայ



«Քարնեկի» հիմնադրամի փորձագէտ Թոմաս տէ Վաալ

կարգաւորում», նկատած է Տէ Վաալը:

Ըստ անոր՝ Թրքական արտաքին քաղաքականութեան ոլորտի ընտրանին (էսթապլիշմենթը) կը տեսնէ բոլոր այն առաւելութիւնները, օգուտները, որոնք պիտի ստանան Հայաստանի հետ յարաբերութիւններու կարգաւորման պարագային. նոր կապուղիներ կրնան ստեղծուիլ, Թուրքիան կրնայ խաղացող դառնալ Հարաւային Կովկասի մէջ, Հայաստանի հետ յարաբերութիւններու կարգաւորման պարագային:

«Անոնք հաշուի կ'առնեն այդ շահերը, սակայն Թուրքիոյ արտաքին քաղաքականութիւնը այժմ ակնյայտօրէն կը վարէ նախագահի աշխատակազմը, պարոն էրտողանը, եւ ան այժմ Պաքուէն ազդանշաններու կը սպասէ: Իմ կարծիքով՝ եթէ նոյնիսկ փոքրիկ, մէկ էջնոց պայմանագիր ստորագրուի Պաքուի եւ Երեւանի միջեւ, այդ բաւական պիտի ըլլայ Անգարայի համար: Բայց սա շատ լաւատեսական բեմադրութիւն է եւ իսկապէս, դժբախտաբար, կախեալ է Պաքուէն», եզրափակած է փորձագէտը:

Հայկական Բանակին Համար Նախատեսուած Նոր Համազգեստը Հաշուի Պիտի Առնէ ՆԱԹՕ-ի Զափորոշիչները

Հայկական բանակին համար նախատեսուած նոր համազգեստը հաշուի պիտի առնէ ՆԱԹՕ-ի չափորոշիչները: Այս մասին «Sputnik Արմէնիա»-ի գրաւոր հարցումին ի պատասխան յայտնած են Պաշտպանութեան նախարարութեան:

Դեռ նախորդ տարուայ Նոյեմբերին պաշտպանութեան նախարար Սուրէն Պապիկեան Ազգային ժողովին մէջ յայտնած էր, որ բանակին մէջ նախաձեռնուած է համազգեստի փոխարինման գործընթացը, եւ միջազգային գործընկերներուն հետ աշխատանք կը տարուի:

«Նոր համազգեստի ընտրութեան հարցում ՀՀ Պաշտպանու-

թեան նախարարութիւնն առաջնորդուած է միջազգային փորձի փոխանակման միջոցով իրականացուող ուսումնասիրութիւնների եւ ՆԱԹՕ-ի չափորոշիչներին համապատասխան: Ուսումնասիրուել են ՆԱԹՕ անդամ երկրներին՝ այդ թւում ԱՄՆ-ի, Ֆրանսայի, Յունաստանի, Չեխիայի համազգեստների օրինակները», յայտարարած են գերատեսչութեան:

Նոր համազգեստի ներդրումն յետոյ Պաշտպանութեան նախարարութիւնը հանդէս պիտի գայ օրէնսդրական նախաձեռնութեամբ, համաձայն որուն, բանակին մէջ գործող նմուշի համազգեստի վաճառքը պիտի արգիլուի:

րուն միջեւ պաշտպանական ոլորտին մէջ 2024 թուականի համագործակցութեան ծրագիրը, որ

կը ներուէ շարք մը միջոցառումներ Հայաստանի եւ Ղազախստանի մէջ:



ԳԱՔՐԻԷԼ ՄՈԼՈՅԵԱՆԻ ԶՈՅԳ ՅՈՒՐԵԼԵԱՆՆԵՐԸ

ՆՇԵԼՈՎ 90 ԱՄԵԱԿԸ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ՈՒ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ 70-ԱՄԵԱԿԸ ԿՐ ԽՈՆԱՐՀԻՆՔ ԻՐ ՎԱՍՏԱԿԻՆ ԱՌՁԵԻ



Լուս Անճելոսի Հայ Ամերիկեան թանգարանի հոգաբարձության անդամ (2022) Գ. Մոլոյեան ելոյթ կ'ունենայ, իր կողքին գործադիր ատենապետ Պերճ Կարապետեան


Այս օրերուն յոբելեանական հանդիսութեամբ մը պիտի նշուի Գաբրիէլ Մոլոյեանի ծննդեան 90-ամեակը եւ ազգային ու հասարակական գործունէութեան 70-ամեակը:

Ան բացառիկ նուիրումով տասնամեակներ շարունակ՝ Միջին Արեւելքէն մինչեւ Ամերիկա ծառայած է Հայ ժողովուրդին՝ ազգային, քաղաքական, կրթական, մշակութային ու լրագրական ասպարէզներուն մէջ:



Ծնողները Եղիա եւ Վարդուհի եւ քոյրերը Անի եւ Շուշանիկ

Մոլոյեան սիրուած ու բացառիկ յարգանքի արժանացած անձնաւորութիւն մըն է մեր համայնքային կեանքէն ներս ու կը շարունակէ մաս կազմել միութենական եւ կուսակցական աշխատանքներուն: Ան տարիներու ընթացքին կուտակած իր հարուստ փորձն ու գիտելիքները կը փոխանցէ նոր սերունդին ու քաջալեր կը հանդիսանայ անոնց գործունէութեան:



Լիբանանի «Սաուք էլ Ուրուպա» ռատիոկայանի հայկական բաժնի վարիչ օրուան լուրերը հաղորդած պահուն (1958)

Գաբրիէլ Մոլոյեանի կենսագրութիւնը շաղկապուած է Միջին Արեւելքի եւ ապա Քալիֆորնիոյ հայութեան ազգային-հասարակական կեանքի հետ, որուն մէջ ան ունեցաւ իր կարեւոր ներդրումը, յատկապէս Լուս Անճելոսի հայ համայնքի կազմաւորման առաջին տարիներուն:

Ծնած է Պէյրութ 1933-ին, գաւակը ըլլալով մեծ եղեռնէն վերապրած Եղիա Մոլոյեանի, որ իր ընտանեկան համեստ բոյնը հիմնած էր Վարդուհի Հալաճեանի հետ:

Գ. Մոլոյեան յաճախած է Մեծի Տանն Կիլիկիոյ Անթիլիասի դպրեւանքը, այնուհետեւ զբաղած է մանկավարժութեամբ: Նախ կը պաշտօնավարէ Դամասկոսի Սրբոց Թարգմանչաց վարժարանէն ներս, ապա տարի մը ետք կ'ընդունուի Պէյրութի Ազգային Սահակ-Մեսրոպեան նախակրթարանը, ուր կը պաշտօնավարէ նախ որպէս ասագ ուսուցիչ եւ ապա՝ փոխ-տնօրէն: Միաժամանակ կը հետեւի Պէյրութի Ֆրանսական Սէն ժոզէֆ համալսարանի հայագիտական դասընթացքներուն:

1953-ին կ'անդամագրուի Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կու-



Կիլիկիոյ Կաթողիկոսարանի դպրեւանքի սաները: Կեդրոնը տեսուչ Դերեմիկ Եպս. Փոլատեան

սակցութեան եւ 1954-ին՝ խումբ մը ընկերներու հետ, որոնց շարքին ժիրայր Նայիրի, Յակոբ Նորունի, Հրանդ Գանգրունի, Սարգիս Խայեան եւ Արամ Տէմիրճեան կը հիմնեն Նոր Սերունդ Մշակութային Միութիւնը: Շուտով կը սկսի լոյս տեսնել ՆՍՄՍ-ի «Արարատ Գրական» պարբերաթերթը, խմբագրապետութեամբ Յակոբ Նորունիի: Գ. Մոլոյեան մաս կը կազմէ խմբագրութեան եւ իր գործակցութիւնը կը բերէ արաբական գրականութեան բաժնին: Կ'աշխատակցի նաեւ «Արարատ» օրաթերթին: Ապա անդամ մտնւթ թերթի խմբագրութեան:

1958-ի Լիբանանի քաղաքացիական պատերազմին պատճառով եւ երկրի ժողովրդային ընդդիմադիր ճակատի առաջարկով, ՍԴՀԿ-ի որոշումով Գ. Մոլոյեան կը վարէ ընդյատակեայ «Նէճէտ» ռատիոկայանի հայկական բաժինը եւ քաղաքական պայթուցիկ իրավիճակներու ընթացքին ողջմտութեամբ եւ գիտակից հասկացողութեամբ կը մեկնաբանէ երկրի ընդհանուր վիճակը, ներքողելով ժողովրդավարական սկզբունքներն ու հայ ժողովուրդի կեցուածքը ընդդէմ օտար միջամտութիւններուն եւ սադրանքներուն, որոնց զոհ



ՀՄՍ-ի 40-ամեակին առթիւ Պէյրութի Սահակեան մարզադաշտի մէջ ելոյթ կ'ունենայ Յառաջդիմական Սոցիալիս Կուսակցութեան նախագահ Քամալ Ճամալաթ իսկ իր մօտ ելոյթը գրի կ'առնէ Գ. Մոլոյեան

գացին նաեւ բազմաթիւ Հայեր: Անորոշութեան մէջ տուայտող մեր հասարակութեան համար, հայկական միակ տեղեկատուութեան աղբիւրն եղող այդ ռատիոկայանը՝ դարձաւ յուսատու փարոս լաւատեսութեան, խաղաղ ու բարօր ապագայի մը տեսլականին:

1956-1960 մաս կը կազմէ Լիբանանահայ Վերածնունդ Միութեան Սկաւտական Խորհուրդին, կազմակերպելով երիտասարդութեան համար ամառնային ճամբարներ:

1960-ին Գ. Մոլոյեան ընտրուելով Լիբանանի շրջանի ՍԴՀԿ-ի վարիչ Մարմնի անդամ, կը նշանակուի երիտասարդական եւ ուսանողական դիւանի դիւանապետ: Այդ շրջանին՝ առաւել կ'աշխուժանայ կուսակցութեան անմիջական հովանաւորութիւնը վայելող Տիւրունի Ուսանողական եւ Երիտասարդական Միութիւնը, պատրաստելով հայ-



ԳԱՐԻԷԼ ՄՈՒՅԵԱՆԻ 2039 ՅՈՒՐԵԼԵԱՆՆԵՐԸ

ՆՇԵՆՈՎ 90 ԱՄԵԱԿԸ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ՈՒ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵԱՆ 70-ԱՄԵԱԿԸ ԿՐ ԽՈՆԱՐՏԻՆՔ ԻՐ ՎԱՍՏԱԿԻՆ ԱՌՁԵԻ



Խմբանկար ՍԴՀԿ-ի Ընդհանուր Համագումարի պատգամաւորական ժողովին. Կեդրոնը նորընտիր նախագահ Յարութիւն Կուժունի եւ նախկին նախագահ Սեդրակ Շահէն

րենանուէր եւ գաղափարապաշտ նոր սերունդ մը:
1961-ին, Գ. Մոլոյեան ՍԴՀԿ-ի կողմէ Լիբանանի պատուիրակութեան հետ, կը մասնակցի Մոսկուայի մէջ կայացած Երիտասարդութեան եւ Ուսանողութեան միջազգային առաջին ֆորումին: Այնուհետեւ Երեւանի մէջ կը հիւրընկալուի Հայաստանի Երիտասարդական կազմակերպութեան կողմէ: Կը գլխաւորէ Լիբանանահայ ուսանողա-



Մեծ եղեռնի 50-ամեակին առթիւ Հնչակեան պատուիրակութիւնը Անթիլիասի Հայ Նահատակներու Յուշարձանին մօտ

կան եւ Երիտասարդական պատուիրակութիւնները միջազգային երիտասարդական եւ ուսանողական փառատօներուն (Հելսինքի 1962, Սոֆիա 1968, Պերլին 1973): Իւրաքանչիւր քաղաքին մէջ կազմակերպելով նաեւ «Հայկական Օր»: 1962ին՝ կը մասնակցի Վարշաւոյ Միջազգային Երիտասարդական եւ Ուսանողական համաժողովին, որպէս Լիբանանահայ երիտասարդութեան ներկայացուցիչ:



1961-ին այց Ս. Էջմիածին եւ հանդիպում Ամենայն Հայոց Հայրապետ Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգէն Ա. Կաթողիկոսին, ընկերակցութեամբ JAF-Երիտասարդական կազմակերպութեան ներկայացուցիչ (Ֆրանսա) Դաւիթ Դաւիթեան

1965-1975 կը ստանձնէ Հաճնոյ Հայրենակցական Միութեան Մերձաւոր Արեւելքի Կեդրոնական վարչութեան գործադիր քարտուղարի պաշտօնը:

1965-ի ամրան կը մասնակցի Աղեքսանդրիոյ Արաբ Ուսուցիչներու 4-րդ համագումարին, որպէս առաջին հայ ուսուցիչ:

1970-ին Գ. Մոլոյեան որպէս առաջին Լիբանանցի ուսուցիչ, կը

հրաւիրուի Պերլին, ըլլալու պաշտօնական հիւրը Արեւելեան Գերմանիոյ Ուսուցիչներու արհեստակցական միութիւններու կեդրոնական վարչութեան, ծանօթանալու երկրի կրթա-մշակութային հաստատութիւններուն: Աւելի քան տասը տարիներ կը վարէ Նոր Սերունդ Մշակութային Միութեան ատենապետի պաշտօնը:



Հնչակեան պատուիրակութեան այցելութիւնը Սագրամենթո, Գալիֆորնիոյ կառավարիչ ճորճ Տեօքմեանը շնորհաւորելու

Նոյն տարին Հայաստան ժամանած որակաւորման ու կատարելագործման համար սփիւռքահայ ուսուցիչներու պատուիրակութեան ղեկավար կ'ընտրուի: Իսկ որպէս Լիբանանահայ մամուլի ներկայացուցիչ՝ «Արմէնփրէսի» կողմէ 10 օր կը հիւրընկալուի եւ մաս կը կազմէ Հայաստանցի խմբագիրներուն հետ յատուկ հանդիպումի: Այս առթիւ՝ ան կ'ընէ գործնական առաջարկներ հայոց լեզուի եւ օտարամուտ բառերէն հրաժարելու մասին: Իր շինիչ առաջադրանքները մեծ մասամբ ընդունուած են:



Գ. Մոլոյեան կը պարգևատրուի Ամենայն Հայոց Հայրապետի կողմէ Ս. Ներսէս Շնորհալի շքանշանով, ձեռամբ թեմիս առաջնորդ Յովնան Արք. Տէրտերեանի

1972-ին Հնչակեան Կուսակցութիւնը կը ներկայացնէ Արաբ յառաջադիմական կազմակերպութիւններու համաժողովին:

1973-ին կը նշանակուի «Արմէնփրէս» լրատուական գործակալութեան ներկայացուցիչ՝ Լիբանանի մէջ, հանդիսանալով առաջին սփիւռքահայ լրագրողը այդ պաշտօնին համար:

1973-ին Պէյրութի մէջ կը կազմակերպէ Հայաստանի Էսթրատային նուազախումբի համերգները: Գործնական աջակցութիւն կը ցուցաբերէ Հայաստանի երգի-պարի համոյթի եւ Գոհար Գասպարեանի նուիրուած միջոցառումներուն:

1974-ին Լիբանանահայ մամուլի կողմէ հիւրընկալ ուղեկից կը նշանակուի Հայաստանի մամուլի եւ տեղեկատուական պատուիրակութեան տասնօրեայ կեցութեան, հիւրերն էին Արտաւազդ Խաչիկեան, Կարլէն Դալլազեան եւ գրող Վարդգէս Պետրոսեան:

Պաղեստինեան արդար դատին եւ արաբ ժողովուրդին ի նպաստ՝ զօրակցական ելոյթներ ունեցած է արաբերէն լեզուով, ներկայացնելով Հնչակեան կուսակցութեան տեսակետը այժմեական հարցերու կապակցութեամբ:

1976-ի աշնան Լիբանանի քաղաքացիական պատերազմին պատճառով ԱՄՆ փոխադրուելով կը հաստատուի Քալիֆորնիա:

1977-ին գաղափարակից եւ տեսլապաշտ հայրենասէր երիտասարդներ (որոնք գաղթած էին Միջին Արեւելքէն) կ'որոշեն կորիզ մը կազմելով, իրենց օգտաշատ ծառայութիւնները մատուցել նորակազմ հայ գաղութին տարբեր բնագաւառներու մէջ (ազգային, հա-

Վահան Քերոբեան Գերմանական Ընկերութիւնները Հրաւիրած Է Համագործակցելու Հայկական Կազմակերպութիւններու Հետ



ՀՀ տնտեսութեան նախարար Վահան Քերոբեան Պեռլինի մէջ տեղի ունեցող «Պարէնի եւ գիւղատնտեսութեան միջազգային համաժողովի» (GFFA) շրջանակին մէջ հանդիպած է Պարէնի եւ գիւղատնտեսութեան դաշնային նախարար ձեռն Օզտեմիրի հետ: Հանդիպման ներկայ եղած են նաեւ ՀՀ տնտեսութեան նախարարի տեղակալներ Արման Խոճոյեանը եւ Ռաֆայէլ Գէորգեանը:

Հանդիպման ընթացքին Վահան Քերոբեան ներկայացուցած է գիւղատնտեսութեան ոլորտին մէջ իրականացուող ծրագրերը: Այնու-

հետեւ գրուցակիցները միտքեր փոխանակած են աղքատութեան եւ սովի դէմ պայքարի գործընթացին մէջ Հայաստանի ներգրաւուածութեան վերաբերեալ:

Նախարար Վահան Քերոբեան հրաւիրած է գիւղատնտեսութեան ոլորտի գերմանական ընկերութիւնները համագործակցելու հայկական կազմակերպութիւններու հետ: Ձեռն Օզտեմիր, իր հերթին, առաջարկած է աւելի ընդլայնել համագործակցութիւնը գիւղատնտեսութեան ոլորտին մէջ եւ համատեղ մշակել ոլորտի զարգացման ուղղուած ծրագրերը:

Հայաստանը Կ'ողջունէ

Շարունակուած էջ 1-էն

Ի թիւս այլ դրոյթներու՝ Ֆրանսայի Ծերակոյտի բանաձեւը.

- կ'աջակցի Հայաստանի տարածքային ամբողջականութեան ու ինքնիշխանութեան,
- կը դատապարտէ Ատրպէյճանի կողմէ իր դաշնակիցներու աջակցութեամբ 2023 թ. Սեպտեմբեր 19-ին եւ 20-ին իրականացուած ռազմական յարձակումը Լեռնային Ղարաբաղի մէջ,
- կոչ կ'ընէ Ատրպէյճանին երաշխաւորելու հայ բնակչութեան վերադարձի իրաւունքը Լեռնային Ղարաբաղ երաշխաւորելով այնպիսի պայմաններ, որոնք կ'ապահովեն անոնց անվտանգութիւնն ու բարեկեցութիւնը,
- կոչ կ'ընէ ատրպէյճանական զօրքերուն եւ անոնց դաշնակիցներու անյապաղ եւ անվերապահ դուրսբերումը Հայաստանի ինքնիշխան տարածքէն,
- կը նշէ, որ Հայաստանը իրաւունք ունի պաշտպանելու իր տարածքային ամբողջականութիւնը եւ ունենալու միջոցներ՝ ապահովելու իր անվտանգութիւնը, այդ շարքին՝ ռազմական ճանապարհով,
- կը դատապարտէ Լեռնային Ղարաբաղի քաղաքական առաջնորդներու կամայական ձեռքարկութիւնները,
- կոչ կ'ընէ հեռացնելու Ատրպէյճանին Ձինուած ընդհարման պարագային մշակութային արժէքներու պաշտպանութեան միջկառավարական կոմիտէէն,
- կը կարեւորէ ԵՈՒՆԵՍԿՕ-ի

մէջ փորձագէտներու միջազգային խումբի ստեղծումը եւ գործողումը Լեռնային Ղարաբաղ՝ մշակութային եւ կրօնական ժառանգութեան վիճակի վերաբերեալ տեղեկատուական զեկոյց պատրաստելու համար,

- կը կարեւորէ նաեւ ամենախիստ միջոցներու ձեռնարկումը, այդ շարքին՝ Ատրպէյճանի ղեկավարներու հաշիւներու առգրաւումը եւ Ատրպէյճանէն կազմի եւ քարիւղի ներմուծման արգելքը՝ Ատրպէյճանի կողմէ իրականացուող ռազմական յարձակման դէմ պատժամիջոցներ կիրառելու համար:

Բանաձեւը համահեղինակած են Ծերակոյտի բոլոր քաղաքական խմբակցութիւններու ղեկավարները՝ Պրոնտո Ռոթթայն, Մարիո Գարրերը, Սեսիլ Սուքիերմանը, Կիյոմ Կոնթարը, Փաթրիկ Քաները, Հերվէ Մարսելը, Գլոստ Մալլուրէն եւ Ֆրանսուա Փաթրիան, ինչպէս նաեւ Ծերակոյտին մէջ Ֆրանսա-Հայաստան բարեկամական խումբի ղեկավար Ժիլպեր-Լիւք Տըվինսզը:

Նիստը կը նախագահէր Ծերակոյտի փոխնապահ Սոֆի Փրիմալը: Նիստին ներկայ էր նաեւ Ֆրանսայի՝ Եւրոպայի եւ արտաքին գործերու նորանշանակ նախարար Սթեֆան Սեժուրնեն:

Բանաձեւի ընդունման նիստին պատուոյ հիւրի կարգավիճակին մէջ ներկայ էին Ֆրանսայի մէջ Հայաստանի դեսպան Յասմիկ Տոլմաճեանը եւ Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչ Յովհաննէս Գէորգեանը:

Եւրոպայի Ծանրակշիռ Զգուշացումները

Շարունակուած էջ 1-էն

տարածքային ամբողջականութիւնը եւ ունենալու միջոցներ՝ ապահովելու իր անվտանգութիւնը, այդ շարքին՝ ռազմական ճանապարհով:

Այս բանաձեւին մէջ ուշագրաւ է «Ատրպէյճան ու դաշնակիցներ» բառակապակցութիւնը, որուն չէինք հանդիպած նախապէս: «Դաշնակիցներ» յոգնակի բառի օգտագործումը ենթադրել կու տայ որ խօսքը կը վերաբերի ե՛ւ Թուրքիոյ ե՛ւ Ռուսաստանին: Առաջինը իր անմիջական մասնակցութեամբ կ'աջակցի Ատրպէյճանի կողմէ Հայաստանի դէմ ռազմական գործողութիւններուն, իսկ երկրորդը՝ Ռուսաստանը իր լուռ մեղսակցութեամբ տակաւին վերջերս նպաստեց Արցախի Հայաթափման:

Խօսելով Ռուսաստանի մասին պետք է անդրադառնալ նաեւ Արտաքին գործոց նախարար Սերկէյ Լավրովի այն յայտարարութեան, թէ 44-օրեայ պատերազմի ավարտին Փութինի, Փաշինեանի եւ Ալիււի մասնակցութեամբ գոյացած համաձայնութեան մէջ «Զանգեզուրի Միջանցքի» մասին երբեք խօսք չէ եղած: Լավրով իր այս խօսքերով երեւութապէս կը պաշտպանէ Երեւանի տեսակետը, սակայն Մոսկուայի ծրագիրը յստակ է. առանց այդ միջանցքի անուանումը օգտագործելու Սիւնիքով անցնող ու Նախիջեւանը բուն Ատրպէյճանին կապող ճանապարհի հսկողութիւնը յանձնել Ռուսական զօրքերուն: Կասկածներ կան, որ այս հարցով Մոսկուան ու Պաքուն կը գործեն համախորհուրդ՝ առաջինը իրեն հա-

մար կ'ապահովէ մնայուն ներկայութիւն եւ աւելի մեծ ազդեցութիւն տարածաշրջանէն ներս, իսկ Պաքուն կը յաջողի իր քաղաքացիները գերծ պահել Հայկական կողմի ստուգումներէն: «Զանգեզուրի Միջանցքի» հարցը դարձեալ հրապարակ գալը կը վերագրուի Մոսկուա-Պաքու փոխադարձ շահի այս ծրագրին, որուն նպատակներէն մին է նաեւ Եւրոպան եւ յատկապէս Ֆրանսան հեռու պահել Հայաստանէն:

Վերջին զարգացումները կը յուշեն, որ անկախ թէ այլ խաղացողներ ինչ կը ծրագրեն, Եւրոպան որոշած է քաղաքականապէս, զինուորապէս ու տնտեսապէս աջակցիլ Հայաստանին, սակայն կը մնայ որ ան չկրկնէ նախկին իր սխալները: Արցախի շրջափակման ժամանակ անոնք բաւարարուեցան կոչերը ընելով ու վստահեցան՝ Արցախի վրայ չյարձակելու Ալիւի խոստումներուն:

Յովհաննէս Յովհաննիսեանի, Յովհաննէս Թումանեանի եւ Աւետիք Իսահակեանի հետ, Վահան Տէրեան (Վահան Տէր Գրիգորեան՝ բուն անունով) կը համարուի արեւելահայ քերթողութեան քառագագաթ փառքերէն մին, որուն գրական հրապարակ տիրականորէն մուտքը (1908) գրեթէ միաժամանակ կը գուզադիպէր արեւմտահայ քերթողութեան կարկառուն գագաթներու՝ Թէքէեանի, Սիւսանթոյի, Վարուժանի եւ Մեծարեանի գեղակերտ գանգիւններուն...:

-Դուք բանաստեղծ էք. ես ուրախութեամբ եմ ողջունում ձեր մուտքը գրական ասպարէզ. բարո՛վ եկաք,- շտապէր էր յայտնելու Թումանեան 1908-ին՝ Տէրեանի «Մթնշաղի Անուրջներ» ձեռագիր տետրակը տեսնելէ անմիջապէս ետք: Յիրաւի լուսաշաւիղ դպրոց մ'ան, քնարերգակ բանաստեղծ՝ արեան մէջ մի կայլակով, ողնուծուծով, որուն սիրտին զգայնիկ առէջները հիւսուեցան թախիծով ու անհուն սէրով հայրենի արեւին ու վերջալուստի մեղեդիներուն, որոնց անկրկնելի երգիչն է ան:

Բանաստեղծական իւրապատուկ արուեստի ճարտարապետ՝ բիւրեղ բաղձանքներու անրջավառ թուրքներով, որոնք իրենց վիրաւոր թեւերուն մէջ առին ու գրկեցին Յոյսի որոտը արշալուստող Հայաստանին, Երկիր Նաիրիին՝ մնալով ուսակական յեղափոխութեան եւ ուսու մտաւորականութեան կողքին, ընդդէմ այդ ժամանակներու արեւմտեան ստապատիր քաղաքականութեան, որուն մասին բանաստեղծը՝ որպէս նա՛եւ պետական գործիչ՝ խօսած է համոզկեր գաղափարախօսական մարդու վարքով:

Անամոք ցաւ, վեհանձնութեամբ անձնաւորուած վիշտ, նուագուն թախիծ, բորբ հայրենասիրութիւն, անանձնական սէր՝ աշնանային մեղմութեամբ ու քնքշութեամբ, Վահան Տէրեանը կը դասուի ըլլալու անրջայեղց այն առաջին պոէտը, որ խորապէս երգեց բազմադարեան խոցերով ու արեւներով արգասաւորուած Երկիր Նաիրին՝ ճամբայ հարթելով մանաւանդ Երիշէ Չարենցին ու խորհրդահայ սերունդի դէմքերուն:

Տէրեանի «Մթնշաղի Անուրջներ» հատորին լոյս ընծայումը իր ժամանակին բարձրացուց սուր վէճեր ու տուն տուաւ բուն քննադատութիւններու՝ գլխաւորութեամբ Լէոյի եւ անոր հետեւորդներուն: Բայց այդ վէճերուն մէջ ճշմարտութեան յաղթանակը եղաւ մեծերուն խօսքը,- Յ. Թումանեանի, Ա. Իսահակեանի, Ալ. Միսանիկեանի, Ա. Տէրտէրեանի, Դ. Դեմիրճեանի, Պ. Մակինցեանի, Ն. Աղբալեանի, Յ. Խանգաղեանի, որոնց խանդավառ ու խրախուսիչ հաս-



տատումները Վահան Տէրեան բանաստեղծի նորարար շունչին ու գրարուեստին հանդէպ եղան տիրական: Յետագային իր բանաստեղծութիւններու շարքն ու դիւանները հարստացուցին գրական գանձարանը բանաստեղծին.- «Գիշեր եւ Յուշեր», «Ոսկի Հեքիաթ», «Վերադարձ», «Ոսկի Շղթայ», «Տրիոլետներ», «Երկիր Նաիրի», «Կատուի Դրախտ»: Հատոր 2.- «Բանաստեղծութիւններ», որ կը ներառէ «Տրիոլետներ Նուարդին», «Իմ Բալիկին», «Տրիոլետներ», «Սեւագրութիւններ», «Թարգմանութիւններ»: Հատոր 3.- Կը բովանդակէ բանաստեղծին յօդուածներն ու գեղուցումները, նամակներն ու հեռագրերը: Հատոր 4.- Նամակներ եւ հեռագրեր: Խորհրդային տարիներուն, Հայպետհրատը չորս հատորով հրատարակած է Վահան Տէրեանի երկերը:

1916-ին, երբ Տէրեան հանրաճանաչ անուն էր արդէն, գրաքննադատ Նիկոլ Աղբալեան հանդէս եկաւ ընդդէմ յօդուածով մը՝ վերլուծութեան ենթարկելով բանաստեղծին երկու տուննոց «Տխրութիւն» քերթուածը: Ան տեսնելով Տէրեանի երկնառաք տաղանդը՝ եկաւ հաստատել, որ «Մթնշաղի Անուրջներ»-ու երգիչը անվիճելի տաղանդ է, ջրելով բանաստեղծին արժէքը թերագնահատել միտող օրուան բանասարկուներու աղմուկը...:

Արդարեւ, Վահան Տէրեանի ծննդավայրը պատմական Հայաստանի Գուգարքն է, Ախալքալաք հայկական գաւառը, որուն Գանձա գեղեցիկ գիւղին մէջ լոյս աշխարհ է եկած ան, Տէր Սուքիաս քահանայ հօր եւ Իւղաբեր զգայուն մօր ընտանեկան յարկին տակ:

Տասնչորս տարեկան պատանի Վահանը իր հօր ձեռքէն բռնած կը տարուի Մոսկուայի Լազարեան ձեմարանը, ուր գրականութեան հանդէպ իր հակումն ու մայրենի լեզուին տիրապետելու հնարաւորութիւնները կը բացուին Չերմեռանդ հոգածութեան ներքեւ վարժարանի ուսուցիչներէն՝ Կարապետ Կուսիկեանի, որուն հետ Տէրեանի բարեկամութիւնը կ'ամրանայ յետագային ալ՝ երախտագիտական իր զգացումները պահելով անոր հանդէպ: Իսկ դանիացի իրեն ուսուցիչ եւ խորհրդապաշտ բանաստեղծ Տոր Լանգէն կը թողու խոր ազդեցութիւն իր գրական ներաշխարհին մէջ:

Լազարեան ձեմարանը Անդրկովկասի փոքրիկ մէկ խճանկար էր Տէրեանի համար: Չանազան շրջաններէ այնտեղ ուսանելու եկած գիշերօթիկ ուսանողներու հետ բա-

նաստեղծին շփումները, անոնց հետ Մոսկուայի թատրոնները յաճախելու վարժութիւնն ու սովորութիւնը կ'ընձեռեն առիթ տիրապետելու ուսերէնին, որուն առընթեր նաեւ լատիներէնին:

Պօտլէն, Վերլէն եւ Մալարմէ մեծ մոլաններով կը նուագեն սիրտի լարերուն վրայ Տէրեանի: Ուսանողական գրասեղաններէն սկսած էր կազմաւորուել իր մէջ գեղագիտական ճաշակը քերթողական արուեստի: Կը խմբագրէ «Յոյս» եւ «Սթիլտիոլմ» թերթերը, կը ստորագրէ հրապարակագրական եւ բանաստեղծական էջեր՝ մերթ Վոլօ եւ մերթ Շվին ծածկանուններով:

Մինչեւ 1915 թուական Տէրեանի կեանքը կը դիմակայէ յախուռն պայքարները ուսանողական շարժումներու, որոնք ապագայ պոէտին մէջ կը կռանեն յեղափոխաշունչ կամքը կարմիր ըմբոստութիւններու: Նոյն տարին երբ կը սկսին հայ-թաթարական ընդհարումները եւ Դեկտեմբերին որոշ ժամանակ մը կը փակուի ձեմարանն ալ, Տէրեան կը մեկնի Թիֆլիս, կը վերանորոգուի՝ շրջելով իր ծննդավայրի ակունքները, եւ յաջորդ տարուան Մայիսին վերադառնալով Մոսկուա՝ կ'աւարտէ Լազարեան ձեմարանի դասընթացները: Իր մտերիմ ուսուցիչներէն՝ Կուսիկեանի միջնորդութեամբ կը մտնէ Մոսկուայի համալսարանը ու կը հետեւի ընկերային-քաղաքական դասընթացներու եւ փիլիսոփայութեան ճիւղին:

Տէրեանէն ունինք երկար աշխատասիրական գործ մը Փաւստոս Բիւզանդի մասին՝ մտային սնունդը պարտելով ձեմարանի մէջ պատմութեան իր ուսուցիչ Փրոֆ. Գրիգոր Խալաթեանին:

«Մթնշաղի Անուրջներ»-ու լոյս ընծայումէն երկու տարի ետք՝

Երկու Բանաստեղծութիւն

ԷՍՏՈՆԱԿԱՆ ԵՐԳ

Երբ կը յոգնես, կը գագագես աշխարհից՝

Դարձիր իմ մօտ, վերադարձիր դու նորից.-

Յաւած սիրտըս միայն քեզնով է շնչել՝

Չի կամենալ նա վերըստին քեզ տանջել:

Եթէ բախտն ու վայելքները քեզ ժպտան,

Օտար մարդիկ քեզ սիրաբար ողջոյն տան

1910-ին, Պօղոս Մակինցեանի եւ Յոլակ Խանգաղեանի հետ «Գարուն» գրական հանդէսի մէջ իր խմբագրական աշխատանքով, Տէրեան իր շուրջ կը հաւաքէ Յովհաննէս Թումանեանի, Աւետիք Իսահակեանի, Ալ. Շիրվանզատէի, Կարապետ Կուսիկեանի, Ալեքսանտր Մատուրեանի, Ալեքսանտր Միսանիկեանի նման անուանի գրողներ, հիմնադրելով նաեւ «Պանթէոն» հրատարակչութիւնը: Դժբախտաբար նիւթական պատճառներ կ'արգելակեն հեղափոխական ընթացքը երկու թերթերուն ալ:

1913-ին Մոսկուայի համալսարանը աւարտելէ ետք, նոյն տարուան աշնան «յաւերժական ուսանող» (բանաստեղծին իսկ խօսքն է իր մասին) Տէրեանը կը գտնենք Փեթերսպուրկի համալսարանի արեւելագիտութեան բաժանմունքէն ներս, աշակերտելով անուանի պատմաբան Փրոֆ. Նիկողայոս Ադոնցի եւ արեւելագէտ-հայագէտ Նիքոլա Մառի: Յետագային Տէրեան իր հիացմունքի թեւերը կը բանայ նաեւ ուսուցիչ յեղափոխաշունչ մեծ գրող Մաքսիմ Կորքիին:

1916-ի ձմեռն ի յայտ կու գան թոքախտի նշանները եւ բանաստեղծը տաժանագին համբերութեամբ, շուրջ չորս տարի տառապելէ ետք կը շիջի Օրենպուրկի մէջ, ուր հասած էր Թուրքիստանէն ճամբայ ելլելով՝ իր քայքայուած առողջութիւնը վերագտնելու վճիռ յոյսը վիրաւոր սիրտին...:

Արդարեւ, Վահան Տէրեան գրական խոշոր ու առանձին դպրոց մ'է, որուն գեղարուեստի համալսարանէն բիւրաւոր ներշնչեալներ, նոր սերունդներ պիտի անցնին ու փառաբանեն անոր փառքը, վաստակը, որ եղաւ ծանրակշիւ, հակառակ իր կարճատեւ կեանքին:

«Աղթամար»

Գուցէ ես լամ բախտիդ համար, իմ անգին, Սակայն դարձիր, վերադարձիր դու կրկին:

Եթէ հեռուն ճակատագիրն անհոգի

Սիրտըդ մատնէ անկարեկից տանջանքի,

Օ՛, գիտեցիր, իմ հոգին էլ կը ցաւի

Անմխիթար մորմոքումից քո ցաւի...

ԱՐԱՐԱՏԻՆ

Երկնալայց ու թեթեւ, Նրբակապոյտ ծածկած մեզ, Դու, հրեշտակ լուսաթեւ, Նիւթեղէն չես դու երբեք: Հայոց արմոտ աշխարհի Հոգին ես դու անարատ, Հուրը յար թող հրահրի Սեզ ճակատիդ, Արարա՛տ: Եւ աւերուող մեր սրտում Եռա՛ անմար ու առատ, Դու, պահապան մշտարթուն, Լուսակատար Արարատ...

Չեմ տեսել քեզ, բայց որպէս Անոյ զնոյր իմ հոգուն Պայծառ ես դու, հրակեզ, Հրապսակ ու կանգուն ... Արդար դրօշ հայութեան, Սիրոյ սեղան հրառատ, Դու՛, իմ երկրի յարութեան

Անխաբ վկայ, Արարա՛տ. Որքան մնանք մեք նկուն, Որքան խաւարն իջնի խոր, Ծիրանաւոր մեր հոգուն Դու՛, պահապան զօրաւոր...

Որպէս երազ լուսեղէն Չիւնապայծառ ու շողուն Դու՛, անխորտակ ապաւէն Հրաճարակ մեր հոգուն. Կանգնիր, անկեալ ժողովուրդ, Եւ հաւատա՛, եւ տոկա՛. Կայ քո վշտում վեհ խորհուրդ Եւ խաչուածին մահ չըկայ. Պարզուիր պայծառ դէպի վեր, Յոլա՛ հրով անարատ, Երկրիս մոխիր ու աւեր, Դու՛, անմահ սիրտ Արարա՛տ...

ՎԱՅԱՆ ՏԵՐԵԱՆ

Գրախօսական՝ Դոկտ. Զաւէն Մարրլեանի «Հայոց Նորագոյն Պատմութեան Էջերէն (1915-2020)» Գիրքին


Կարդալով Դոկտ. Զաւէն Մարրլեանի «Հայոց Նորագոյն պատմութեան էջերէն (1915-2020)» գիրքը, անգամի մը համար եւս կը համոզուիս պատմութիւնէն դասեր քաղելու եւ իրատես դիւանագիտութիւն որդեգրելու անհրաժեշտութեան: Բայց այդ մէկը կարենալ ընելու համար անհրաժեշտ է աննախապաշար մօտեցում ցուցաբերել եւ պեղել պատմութիւնը քննական ակնոցով: Յատկանշանքեր, որոնցմով հարուստ է Դոկտ. Զաւէն Մարրլեան եւ այդ մէկը կ'արտացոլայ իր հրատարակած բոլոր աշխատասիրութիւններուն ընդմէջէն:

Կարդալով գիրքը, անգամի մը համար եւս կը համոզուիս, որ մեծ պետութիւնները կ'առաջնորդուին միայն իրենց շահերով եւ պատրաստ են ոչ միայն անտեսելու փոքրերուն մարդկային տարրական իրաւունքները, այլ նաեւ ոտնակոխելու զանոնք, երբ այդ կը պահանջէ իրենց շահը: Անգլիացիները այդ է որ ըրին, Հայոց Յեղասպանութեան մասնակցած ըլլալուն համար իրենց ձեռքաւարած 142 իթթիհատական եւ այլ թուրք ղեկավարները փոխանակելով 2 անգլիացի սպաներու, 6 մալթացի աշխատաւորներու եւ անոնց յոյն կիներուն եւ զաւակներուն հետ:

Անգամի մը համար եւս կը համոզուիս, որ մեծերու մրցակցութեան մէջ կը տուժեն փոքրերը, երբ չեն յաջողիր ճիշտ կողմնորոշուիլ: Հայաստանի Ա. Հանրապետութեան անկման իսկական պատմութիւնը ուսանելի օրինակ մըն է:

Անգամի մը համար եւս կը համոզուիս, որ համաշխարհային թոհոբոսին դիմադրելու գլխաւոր երաշխիքը ներքին համերաշխութիւնն է, ազգային գերագոյն շահերու հետապնդումը, ուստի եւ նկատելի հաւաքական ուժ ստեղծելու անհրաժեշտութիւնը: Երբ կը յաջողիս այդ ընել, ըստ այնմ կը մշակես յարաբերութիւններդ արտաքին աշխարհին հետ եւ ըստ այնմ կ'արժանանաս համագործակցութեան:

Անգամի մը համար եւս կը համոզուիս, որ կան աշխարհակալական (geopolitical) հասկացողութիւններ, որոնք ժամանակավրէպ չեն դառնար: Կարդացէք հարիւրամեակ մը առաջ, 1920-ին գրուած հետեւեալ տողերը անգլիացի Գնդապետ Սթոքսի կողմէ, ու պիտի համոզուիք: «Թուրքերու կողմէ Հայաստանի յաջող ներխուժումը մասնակիօրէն փոխած է Միջին Արեւելքի կացութիւնը: Թուրքերը հակամէտ են Ատրպէյճանի հսկողութիւնը ունենալու, (իսկ) պոլշեկները վճռած են Ատրպէյճանը




Ռուսիոյ մէջ պահելու: Անհամաձայնութիւնը Թուրքիոյ եւ պոլշեկներու ուստի անխուսափելի է: (Մենք) թշնամի ենք երկուքին ալ, բայց պիտի չկուրինք որեւէ մէկուն հետ: Վայրկեանը պատե՛հ է երկուքէն մէկուն բարեկամութիւնը ապահովելու միւսին դէմ: Պոլշեկներուն հետ բարեկամութիւնը կրնայ կեցնել իրենց ընթացիկ յառաջիկայը դէպի արեւելք եւ դէպի հարաւ, բայց իրենց քարոզչութիւնը պիտի շարունակուի: Այդ մեզի կրնայ նաեւ տալ հում նիւթեր, որոնց կարիքը շատ ունինք մեր ճարտարարուեստին եւ շուկաներ՝ մեր արտադրողներուն համար: Միւս կողմէ դժուար է հաւատալ մնացուն պոլշեկիկեան վարչաձեւի: Թուրքերուն հետ մեր բարեկամութիւնը մեզի պիտի արժէ թողլքումը Թուրքիոյ մէջ յունական տարածումին թիկունք կանգնելու մեր քաղաքականութեան: Մեր կողմը պիտի բերէ ամբողջ իսլամութիւնը, եւ կենսական է մեր արեւելեան կայսրութեան շարունակման համար իսլամը մեր կողքին ունենալ: ...Վի՛հը սիւնիներուն եւ շիիներուն միջեւ լայն է եւ եթէ պէտք է, կարելի է լայնցնել:» Այս մէջբերումը հիանալի օրինակ մըն է տարածաշրջանի հակամարտութեանց ընկալման, որ նոյնքան այժմէական է այսօր եւս: Իսկ վերջին նախադասութիւնը ձեզի վերջիչել տուա՞ւ իրաք-իրան եւ Սէուտական Արաբիա-իրան հակամարտութիւնները:

1991-ին, Հայաստանի Գ. Հանրապետութեան հռչակմամբ, նոր դարաշրջան մը բացուեցաւ մեր ժողովուրդի պատմութեան մէջ, Հայաստանի եւ Սփիւռքի տարածքին: Հետեւաբար, այս նոր դարաշրջանը ճիշտ ուղիի մէջ դնելու համար, շատ անհրաժեշտ կը դառնայ զայն նախորդածի քննական վերլուծութիւնն ու արժեւորումը,

Նոր Գիրքեր Return to Homelessness (Վերադարձ Դեպի Անօթեւանութիւն) Ղեկնակ՝ Տոքթ. Վարդան Թաշճեան

Newman Spring հրատարակչատունէն լոյս տեսած 158 էջերէ բաղկացած, Return to Homelessness հատորի հեղինակ բժիշկ Վարդան Թաշճեան, հետաքրքրական կերպով կը պատմէ մեծ եղունքն բռնի տեղահանուած գաղթական հայերու մասին: Ան դառնօրէն կը վերջիչէ անօթեւան, տնազուրկ եւ վտարանդի հայերու տառապալից կեանքի մասին: Այդ տարագիրներուն բախտակից եղած է նաեւ գիրքին հեղինակը:

Վարդան Թաշճեան փոքր տարիքէն հետամուտ եղած է հետեւիլ բարձրագոյն ուսման, ապրելու համար արժանավայել կեանք մը: Ան տքնաջանութեամբ, յարատեւութեան եւ աննկուն կամքին շնորհիւ հասած է իր տեսլականին, դառնալով քիմիագետ եւ ապա ներդրաբան բժիշկ եւ վիրաբույժ: Բժիշկ Վարդան Թաշճեան մօտէն հետաքրքրուած է եւ աշակցած կարիքաւոր անօթեւաններուն, որոնցմ-



Ներկատարելով եւ իր ներդրումը դնելով անոնց առողջապահական եւ ընկերային հարցերու բարելաւումին համար:

որ պիտի օգնէ մեզի խուսափելու անցեալի սխալներէն: Գիրքին մէջ տեղ գտած «Հայաստանի միջազգային-քաղաքական զարգացման փուլերը (1920-1992)» եւ «Հայ Սփիւռքը, 1921-2020» գլուխները, այդ գծով շատ օգտակար կը հանդիսանան: Նոյնն է պարագան Հայկական Հարցի հոլովոյթին յատկացուած 72 էջերուն, որոնք պիտի նպաստեն մեր առաջնահերթութիւններու վերամշակման գործին:

Կը շնորհակտուենք Դոկտ. Զաւէն Մարրլեանը այս աշխատասիրութեան լոյս ընծայման առթիւ, մաղթելով իրեն քաջառողջութիւն, շարունակելու իր ազգանուէր գոր-

ծունէութիւնը: Աւարտենք մեր այս հակիրճ գրախօսականը մտահոգութեամբ մը: Մեզի չեն պակսիր մեր անցեալի մասին քննական վերլուծութիւններ: Ուրեմն ինչո՞ւ համար չենք յաջողած զանոնք ընդհանրացնել մեր ժողովուրդին մէջ, որպէսզի առիթը չտանք ներքին թէ արտաքին պատեհապաշտներու, մոլորեցնելու ժողովուրդը եւ հուսկ՝ հրահրելու ազգամիջեան վէճեր, որոնք պառակտումներ յառաջացնելով մեր մէջ, կը ջլատեն մեր ուժերը, յանգելով պարտութիւններու եւ կորուստներու: **ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ**

ՎԱՐՁՈՒ ՄՐԱԿ
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ
(200 ՀՈԳԻ ՀԱՄԱՐ)
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՇԵՆԱԶԱՅՆԵԼ
(626) 797-7680

Սկսեալ Զոկտեմբեր 13, 2023-Էն
Նկարչութեան
Դասըթացք
Ամեն Ուրբաթ
5 PM - 6 PM
Ուսուցչուհի Ռիթա Շահինեան
Հասե՛ք
1060 ALLEN AVENUE PASADENA, CA 91104
Արձանագրութիւն
Սկսեալ Սեպտեմբեր 18
Չանգաւարել
+1(626) 681-9455
\$ 30 FEE / Month
Instagram.com/norserountlosangeles
facebook.com/norserountculturalassociation

Ազգային Դաստիարակութիւն

ՎԵՐ. ԴՈԿՏ. ՎԱՅԱՆ Յ. ԹՈՒԹԻԿԵԱՆ

«Ազգ» կը նշանակէ ժողովուրդ մը, որ կը բնորոշուի իր հողին, մշակոյթին եւ լեզուին նուիրեալ: Ազգ մը կազմող մարդիկ իրարու կապուած են արեւակցական, ազգականական եւ սերնդական կապերով: Անոնք պատմական ծագում մը, հայրենիք մը եւ հասարակաց մշակոյթ մը ունին, ինչպէս նաեւ որոշ տոհմիկ աւանդութիւններ: Իսկ «ազգային» կը նշանակէ ազգին վերաբերող, ազգին յատուկ եւ ազգով բնորոշուող:

Ինչ կը վերաբերի «Դաստիարակութիւն» բառին, կը նշանակէ կրթութիւն, մտքի եւ հոգիի, վարք ու բարքի, կեանքի ու կենցաղի որոշ ուղղութիւն տալ:

Ազգային դաստիարակութիւն ջամբել կը նշանակէ ազգ անունը կրող հաւաքականութիւնը դաստիարակել եւ կրթել, անոր մէջ ներմուծել ազգային ոգի եւ նկարագիր, գայն ներշնչել եւ ուղղել իր իտէալներու, ձգտումներու եւ նպատակի ճանապարհին վերջնավայրը՝ բանիւ, գործով եւ կեանքի օրինակով:

Արդ, ինչպէ՞ս պիտի դաստիարակենք մեր նոր սերունդները ընտիր հայեր ըլլալու համար: Ինչպէ՞ս պիտի ստեղծենք անոնց մէջ հայկական ինքնութեան հպարտութիւնը: Ազգային դաստիարակութեան համար կ'ուզենք այստեղ յիշել հետեւեալ մի քանի կարեւոր ազդակները կամ միջոցները. -

1. Հայ Մշակոյթ: Մշակոյթը ժողովուրդի մը հոգեկան, մտաւոր եւ նիւթական ստեղծագործութեան արդիւնքն է, անոր հանճարի խտացումն ու թանձրացումը, ազգային կենսունակութեան ներուժը, անոր ձգտումներուն, յոյզներուն, խոռվիքներուն, տառապանքներուն ու բերկրանքներուն համադրոյթն է արուեստի եւ լեզուի միջոցով արտայայտուած:

Ազգային մշակոյթով ժողովուրդ մը հաղորդակից կ'ըլլայ ու կը միանայ մարդկութեան: Միեւնոյն ժամանակ ազգային մշակոյթը կ'ամրապնդէ ու կ'ապահովէ ժողովուրդի

մը գոյութեան հիմերը: Գոնէ հայ ազգի պարագային, կրնանք անվարան ըսել, թէ հայ մշակոյթը հայութեան համար ինքնապաշտպանութեան ամէնէն ամուր եւ զօրեղ խարխիսներէն մէկը եղած է:

Հայ մշակոյթով է որ կրնանք հայ նոր սերունդներուն ճանչցնել մեր անցեալը՝ դարերու մութին մէջէն լոյսի բերելով հերոսական դէմքերը մեր նախահայրերուն, որոնք աշխատած ու պայքարած են, որպէս զի իրենց յաջորդները ազգային դիմագիծ ունենան:

Հայ մշակոյթով է, որ պիտի կրնանք վեր հանել մեր անցեալի փառաւոր էջերը, մեր ցեղին ձիրքերուն ստեղծագործ մնացուն արժէքները: Եւ այսպէս ընելով պիտի ջանանք ազգային հպարտութիւն ստեղծել մեր նորագոյն սերունդներու սրտին մէջ, թէ իրենք շքեղ անցեալ ունեցող ժողովուրդի մը զաւակներն են □ յաջորդները Հայկ Նահապետի, Մեծն Տիգրանի, Գրիգոր Լուսաւորիչի, Քաջ Վարդանի եւ լուսափայլ այլ հերոսներու, որոնց դէմքերը կ'իշխեն դարերուն:

2. Հայրենիքը: Հայրենիքը ամրակուռ կռուանն է հայ ժողովուրդի գոյատեւման եւ յառաջդիմութեան: Ան հզօր վկայութիւն է մեր ցեղային հանճարի յաւերժական տոկունութեան եւ ապահով գրաւականը մեր գալիքին:

Հայաստանը, դիւթական եւ հմայիչ այն հողն է, որ մեր ազգային յոյսերուն, երազներուն ու տեսիլքներուն գումարը կը խտացնէ: Պատմութեան արիւններէն ու աւերներէն ժառանգ մնացած այն պատառ մը հողն է որ կը կոչենք Մայր Հայաստան:

Ամէն լի-իրաւ հայու համար հայրենիքը սոսկ որեւէ երկրամաս մը չէ, այլ արարատեան այն հողամասը որ մեր ցեղի դարաւոր քրտինքով եւ արիւնով մկրտուած է:

Ամէն հայրենասէր հայ իր խօսքով, կեանքի օրինակով եւ գործնական հայրենասիրութեամբ կրնայ հայրենիքի հանդէպ սէր, ներշնչում եւ նուիրում ստեղծել նոր սերունդի հայ տղոց եւ աղջիկներու կեանքին մէջ: Ասիկա

ազգային դաստիարակութիւն ջամբելու ազդու միջոցներէն մէկն է:

3. Հայ Եկեղեցին: Հայ Եկեղեցին դարեր շարունակ բախտորոշ ազդեցութիւն ունեցած է հայ ազգի հոգեւոր, ազգային, քաղաքական, ընտանեկան, ընկերային եւ մշակութային կեանքին վրայ: Ան հզօր ազդակ մը եղած է հայ ազգի քաղաքակրթութեան եւ ստեղծագործ յառաջդիմութեան:

Հայ Եկեղեցին նաեւ եղած է հզօր ազդակ մը հայ ազգային-քաղաքական կեանքի ղեկավարման մէջ: Երբ պետութիւն ունեցանք, ան գործեց պետութեան հետ ձեռք-ձեռքի: Իսկ երբ մեր պետականութիւնը կորսնցուցինք, ան ստանձնեց հայ ժողովուրդի հոգածութիւնը աշխարհի չորս ծագերուն:

Դարձեալ, Հայ Եկեղեցին իբրեւ քրիստոնէական ընտիր դաստիարակութիւն ջամբող հաստատութիւն, դարեր շարունակ դարձած է հայ ժողովուրդի մէջ քրիստոնէայ նկարագիր կերտող ուժեղ ազդակ մը: Դարեր շարունակ, ան դարբնեց հայ հոգին՝ Քրիստոսի, Իր առաքեալներուն, հայ սուրբերուն ու մարտիրոսներուն ոգիով:

Սիրել եւ սիրցնել գայն ամէն հայ քրիստոնէային վսեմ պարտականութիւնը ըլլալու է:

4. Հայ Լեզուն: Աշխարհի որ անկիւնն ալ գտնուինք հայ լեզուն մեր ինքնութիւնը պահող ու պաշտպանող վահանն է, մեր արմատներուն աւիշ հասցնող միջոցը, ուր թագնուած են բոլոր առանձնաշատ կուլթիւնները, որոնցմէ անձ մը կը տարբերի ուրիշ անձէ մը՝ իր զգալու, խորհելու արտայայտուելու եղանակով, աշխարհ ընկալուածով եւ լեզուամտածողութեամբ:

Հայ լեզուին սպառնացող վտանգը մասնաւորաբար սփիւռ-քահայուն համար բացայայտ է. հարց մը, որ խօսելով, գիտակցելով եւ մտահոգուելով չի դարձնուիր, չի լուծուիր, այլ որչափ հնարաւոր է, դրական աշխատանքով: Իսկ դրական աշխատանքը կ'ենթադրէ հայ դպրոցներ հիմնել՝ հայերէն խօ-

սելու, հայերէն գրելու եւ կարդալու համար: Դրական աշխատանքը կը պահանջէ նաեւ որ հայ տունը իրօք հայ տուն ըլլայ, ուր հայկական մթնոլորտ տիրէ, ուր խօսակցական լեզուն հայերէն ըլլայ, ուր տիրեն հայկական աւանդութիւններն ու բարեմասնութիւնները, ուր հայ լեզուով փոխանցուին հայ ոգին ու հայկական արժէքները:

5. Հայ Դատ: 1915 - 1923 տարիներուն տեղի ունեցող հայկական Յեղասպանութեան իբրեւ հետեւանք, Արեւմտահայաստանի հայութիւնը ոչ միայն բրտօրէն արմատախլուեցաւ իր երեք հազարամեայ հայրենի հողէն, այլեւ աւելի քան մէկ ու կէս միլիոն անմեղ զոհեր տուաւ: Այսպէս, հայութեան ֆիզիքական բնաջնջման ծրագիրներու իրագործումով, Արեւմտահայաստանն ու Կիլիկիան բոլորովին բռնագրաւուեցան իրենց իրաւական տէրերէն եւ հայ ժողովուրդին գրեթէ կէսը բնաջնջուեցաւ...:

Հայ Դատ եւ ազգային պահանջատիրութիւն սերտօրէն աղերսուած են իրարու: Թուրք պետութեան հայ ազգին պահանջը հայկական Յեղասպանութեան ճանաչումն է, ինչպէս նաեւ հայկական հողերու վերադարձը իր բուն իրաւատիրոջ՝ հայ ժողովուրդին: Եւ այս արդար դատը անժամանցելի է փոյթ չէ թէ աւելի քան դար մը անցած է Մեծ Ռճիրէն:

Բայց, դատ մը շահելու համար անհրաժեշտ է իրագրել ըլլալ անոր ներքին եւ արտաքին բոլոր փուլերուն: Եւ որովհետեւ Հայ Դատը ամէն հայու դատն է, անոր հետապնդումը կը պահանջէ մեզմէ՝ լաւ ճանչնալ այդ Դատը եւ ապա լաւ ճանչցնել գայն հայ ժողովուրդի բոլոր զաւակներուն, մանաւանդ մեր նոր սերունդին: Այս ամէնը անբաժանելի մաս կը կազմեն ազգային դաստիարակութեան:

Արդ, Հայ Մշակոյթ, Հայրենիք, Հայ Եկեղեցի, Հայ Լեզու եւ Հայ Դատ կարեւոր ազդակներ եւ միջոցներ են ազգային դաստիարակութեան, որոնց միջոցով պիտի կրնանք դաստիարակել նոր սերունդները ընտիր հայեր ըլլալու եւ իրենց հայկական ինքնութեան հպարտութիւնը իրենց հետ պտտցնելու ամենուրէք:

Երագելն Անգամ Անոյ Է

ԲԱԳՐԱՏ ԷՍԴՈՒԳԵԱՆ

Ուրախացանք Պերլին քաղաքը կիսող պատին փլուզման պատկերը տեսնելով: Բ. Համաշխարհային պատերազմի աւարտին, իբրեւ պարտուած երկիր Գերմանիա ահամայ հարկադրուեցաւ հարազատ երկրի տարանջատման:

Կարճատեւ եղաւ այդ ուրախութիւնը: Մարդիկ շուտով մոռցան «Անգամ մըն ալ երբե՛ք» կարգախօսի իմաստը: Պուշ կրտսերէն ետք, իբրեւ յիմարութեան մարմնացում Թրամփ եկաւ բազմելու ԱՄՆ նախագահի աթոռին: Գաղթականներու մուտքը արգիւլելու համար դիմեց ամենանախնական միջոցին, երբ պատ հիւսեց Մեքսիքայի սահմանի երկայնքով: Պատ հիւսելու ճարձքն ստույգ թուեցաւ այլոց եւս: Իսրայէլ պատով անջատեց իր երկիրը Պաղեստինէն: Թուրքիա պատեր հիւսեց հարաւային սահմանի երկայնքին: Յունաստան Մա-

րիցա գետեզրին եթէ ոչ պատեր, այլ փշաթելերով ամրացուց Թուրքիոյ սահմանը: Այժմ եւրոպացիք Միջերկրականի ափերը եւս կ'ամրացնեն ժայռակոյտերով:

Մենք որ հեզնանքով ու ծիծաղով դիտած ենք մարդկութեան այս թշուառ ճարահատութիւնը, այսօր մենք ալ խորհուրդ պիտի տանք Ձանգեզուրի յարող շրջանները բարձր պատերով անարիկ պահել:

Իսկայէս ճարահատութիւն մըն է այս, քանի որ ոչ ի՛նչսմ Ալիեւ եւ ոչ ալ Ռեճեփ Թայյիպ էրտողան նպատակ չունին խօսքէ հասկնալու: Անոնք երկուստեք յամառ պահանջատիրութեամբ կը հոլովեն Ձանգեզուրի միջանցքի մասին:

Հայաստանի լրատու գործակալութիւններ վերջերս կը հաղորդեն թէ բոլոր աշխատանքները աւարտած են Մարգարայի անցակէտի վրայ: Այսինքն Հայաստան-Թուրքիա սահմանակէ-

տը պատրաստ է շահագործման: Սակայն այս մասին Թուրքիա կը հրաժարի կամք դրսեւորել եւ այս զարգացումը անարձագանգ կը մնայ Թուրքիոյ կողմէ:

Եթէ Մարգարայի անցակէտը պատրաստելու փոխարէն Ձանգեզուրը բարձր պատերով կամ ժայռաբեկորներով անանցանելի դարձնէինք, վստահ եղէք որ Թուրքիոյ գրաւոր եւ տեսողական լրատուամիջոցները շաբաթներ շարունակ իրենց օրակարգի գլխաւոր նիւթ կը դարձնէին այս զարգացումը:

Հայաստան բազում անգամներ յայտարարեց թէ Ատրպէյճանի եւ Թուրքիոյ հասկացողութեամբ «միջանցք» բանալը երկրի հողային ամբողջութիւնը խանգարող իմաստ ունի եւ անկախ պետութիւնը երբեք պիտի չարտօնէ նման ոտնձգութեան:

Նոյն եղանակով հարեւան եւ մանաւանդ սահմանակից երկիր Իրան ալ բացայայտ կերպով յայտարարեց այս պահանջի դիմաց իր դժկամութիւնը:

Ուրեմն կրկնենք՝ խօսակցին հետ պէտք է խօսիլ իր

հասկցած լեզուով:

Այս մասին նաեւ օրինակ կրնանք բերել պատմական դէպքերը:

Չինացիք թրքական արշաւանքները կասեցնելու համար չէ որ հիւսած էին աշխարհի ամենաերկար պարսպապատը: Յաւալի է հազարամեակներ ետք անհամաձայնութիւնը վերջնականապէս լուծելու համար հարկադրուած ըլլանք նման նախնական լուծումի մը: Բոլորս գիտենք թէ մարդ արարածը պէտք էր ունենալ բանականութիւն, որպէսզի քաղաքակրթութիւնը յառաջընթաց արձանագրէ: Բայց այդ կարողութենէ զուրկ ենք շնորհիւ Ալիեւի եւ էրտողանի նման քաղաքական գործիչներու:

Բարբախտաբար Հայաստանի կառավարութեան ներկայացուցիչները գիտակցելով իրենց պատասխանատուութեան, անտես պիտի առնեն այս անհեթեթ առաջարկը եւ պիտի շարունակեն դիւանագիտական եւ պետական լրջութեան համապատասխան քայլերով:

Ի՞նչ ըսեմ, երագելն անգամ անոյ չէ:

Հանգանակային Յաջող Ձեռնարկ Ի Նպաստ Երիտասարդ Հոգեւորականներու Ուսման (Steward) Որակաորման

Մօտ 200 հոգի ներկայ գտնուեցաւ Արեւմտեան Թեմի առաջնորդարանի կողմէ կազմակերպուած հանգանակային տարեկան ճաշկերոյթին, ի նպաստ երիտասարդ հոգեւորականներու բարձրագոյն ուսման եւ վերաորակաւորման (Steward) ծրագրին:

Գալայճեան արդիական եւ գեղատեսիլ սրահին մէջ կայացած սոյն միջոցառումին կը նախագահէր բարեջան առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան: Ներկայ էին նաեւ Թեմական Խորհուրդի ատենապետ Տիար Վարդան Նազիրեան: Առաջնորդի տեղակալ Արժ. Տ. Մանուկ Ա. Քհնյ. Մարգարեան, Հոգշ. Երեմիա Վրդ. Աբգարեան, Արժ. Տ. Սարգիս Ա. Քհնյ. Փեթոյեան, ինչպէս նաեւ տարբեր կա-

ռուցներու պատասխանատուներ:

Համազամ ճաշերու սպասարկութենէն ետք՝ գործադրուեցաւ օրուան պատշաճ յայտագիր մը: Խօսք առնողերը շեշտեցին բարձրագոյն ուսման կարեւորութիւնն ու երիտասարդ հոգեւորականներու առնչակից դառնալը ժամանակակից կեանքի պայմաններու եւ մարտահրաւէրներուն հետ:

Առաջնորդ Յովնան Սրբազան շնորհակալութիւն յայտնեց բոլոր անոնց որոնք՝ սատար կը հանդիսանան սոյն նախաձեռնութեան, որուն առաքելութիւնն է շարունակել արդիւնաւետ ծառայութիւնը համայնքի կեանքէն ներս:

Կ'իմամանք թէ աւելի քան 200,000 տոլար գոյացած է սոյն հանգանակային յաջող ձեռնարկէն:

Սուրբ Ներսէս Շնորհալի Պատուոյ Շքանաշնով Պարգեւատրուեցան Այտա Ասրէճեան, Այտա Սէթեան Եւ Արա Պապայեան

Անցեալ կիրակի 21 Յունուար, 2024, Պրըպէնքի Ս. Ղեւոնդեանց Մայր Տաճարին մէջ, տեղի ունեցած հանդիսաւոր պատարագի ընթացքին, եկեղեցական յատուկ արարողակարգով, Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Հայրապետին կողմէ Սուրբ Ներսէս Շնորհալի պատուոյ շքանշանին արժանացան հայ իգական սեռի աշխոյժ եւ նուիրեալ գործիչներէն Այտա Ասրէճեանն ու Այտա Սէթեանը, ինչպէս նաեւ գաղութիս հանրածանօթ եւ վաստակաւոր անձնաւորութիւններէն՝ Արա Պապայեանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ. ի սրբատառ կոնդակի ընթերցումը կատարեց օրուան պատարագիչ Հոգշ. Տ. Երեմեա Վրդ. Աբգարեանը: Այնուհետեւ տրւեցա-

թեան արարողակարգի նախագահ եւ թեմիս բարեջան առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան, վերոյիշեալ պարգեւատրեալներուն լամբակները զարդարեց Սուրբ Ներսէս Շնորհալի շքանշաններով, արժանանալով ներկայ հաւատացեալներու ծափահարութեանց: Այս առթիւ Յովնան Սրբազան իր սրտագին շնորհակալութիւնները յայտնեց երեք անձնաւորութիւններուն, մէկ առ մէկ բնութագրելով իրենց նկարագրային եւ ծառայողական արժանիքները, զորս մատուցած են անցնող տասնեակ տարիներուն, ի նպաստ նոր սերունդին, եկեղեցիին եւ ազգային կառուցներուն: Իր խօսքն աւարտեց շքանանակիրներուն մաղթելով քաջառողջութիւն եւ յաջողութիւն իրենց նուիրական առաքելութեան մէջ:

Միլանի Սիմֆոնիկ Նուագախմբի Նոր Երաժշտական Ղեկավարը Կը Լինի Էմանուէլ Եգնաւորեանը



Միլանի սիմֆոնիկ նուագախմբի նոր երաժշտական ղեկավարը կը լինի հայկական ծագումով Էմանուէլ Եգնաւորեանը: Այս մասին յայտարարուած է նուագախմբի ֆէյսպուքեան էջում: Էմանուէլը յայտնի կոմպոզիտոր, դիրիժոր Լորիս Եգնաւորեանի որդին է:

28-ամեայ Չուժակահար, դիրիժոր Էմանուէլ Եգնաւորեանը ծնուել է Աւստրիայում: Չնայած երիտասարդ տարիքին՝ արդէն հասել է տպաւորիչ յաջողութիւններ:

2012 թ-ին նա ներկայացրել է

Աւստրիան «Պատանի կատարողների Եւրատեսիլ»-ում:

2014 թուականի Սեպտեմբերին ձգնաւորեանը դարձել է առաջին երաժիշտը Աւստրիայից, ով յայտնուել է Fritz Kreisler մրցոյթի եզրափակիչ փուլում, որտեղ գրաւել է երրորդ տեղը: 2014 թուականի Նոյեմբերին նա ստացել է Casinos Austria Rising Star մրցանակը:

Որպէս Չուժակահար նա անցեալ տարի Ռիկարդօ Շայիի հետ բացել է Լա Սկալա թատրոնի Ֆիլհարմոնիկ նուագախմբի համերգաշրջանը:

Սփիւռքի Սէջ Գտնուելով՝ Հնարաւոր Է Երեւութային Շրջիլ Հայաստանեան Թանգարաններէն Ու Հնավայրերէն Ներս



Սլաքները կ'ուղղորդեն, շատ բնական եւ իսկապէս, տպաւորութիւն կը ստեղծէ, թէ դուն տաճարին տարածքէն ներս կը գտնուիս:

Ջուարթնոց եւ Մեծամօր արգելոց-թանգարաններէն ներս շրջելու համար այլեւս թանգարան այցելելը պարտադիր չէ: Յուցադրուած նմուշներուն կարելի է ծանօթանալ նաեւ «monuments.am» եւ «hushardzan.am» կայքերուն վրայ ներկայացուած երեւութային շրջագայութեան միջոցաւ:

Մեծամօր արգելոց-թանգարանը ներկայացուած է, ե՛ւ թանգարանային ցուցադրութիւնը, ե՛ւ հնավայրը, Ջուարթնոցը եւս, ե՛ւ տաճարի տարածքն է, ե՛ւ թանգարանի շէնքը, թանգարանային առարկաներէն որոշ ցուցանմուշներ:

Երեւութային շրջագայութիւնը երեք լեզուով է՝ հայերէն, ռուսերէն եւ անգլերէն: Ստեղծուած է ոչ միայն Հայաստանի մէջ բնակող, այլեւ սփիւռքի մեր հայրենակիցներուն եւ օտարերկրացիներուն համար: Թանգարաններուն մէջ շրջացը կ'ուղեկցուի Արամ

Խաչատրեանի երաժշտութեամբ:

Պատմամշակութային յուշարձաններու պահպանութեան ծառայութեան ստեղծած շրջագայութիւնը թանգարանները հանրահռչակելու նպատակ ունի: Հակառակ անոր, որ այցելուները երեւութային շրջագայութեան միջոցաւ ամբողջութեամբ չեն կրնար ծանօթանալ արգելոց-թանգարաններուն պահուստին:

Հետաքրքրութիւն թողնուած է, որ այցելուն նաեւ հետաքրքրութիւն ունենայ արդէն իրականութեան մէջ այցելելու թանգարան, երեւութայինէն տեղափոխուելու իրական թանգարան եւ շօշափելու պատմութիւնը, տեսնելու, ծանօթանալու:

Յառաջիկային երեւութային շրջագայութիւնը հասանելի պիտի դառնայ Գառնիի տաճարէն ներս, Ամբերդ ամրոցին ալ հնարաւոր պիտի ըլլայ ծանօթանալ ձայնային գրաստանի միջոցաւ: Նախաձեռնութիւնը պիտի շարունակուի. յետագային պիտի թուայացուին Հայաստանի բոլոր թանգարանները:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

* \$50,00 * \$100,00 (first class) for USA

\$ 125,00 (Air Mail) for Canada.

\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel:-----

Email: -----

Աշխատանքով Արգասաւորուած Կեանք (Գրիգոր Գրիգորեանի ցաւալի Մահուան Քառասնօրեակի Առիթով)

Մեր համագիւղացին էր Իրանի Բուրվարի գաւառից: Մնուել էր 1926 թ. Մայիս 24-ին մի նահապետական ընտանիքում: Նրա հայրը՝ Անդրիասը աշխատասէր եւ ձեռնագալիքներով ընդունակ ու յարգուած մէկն էր, իսկ մայրը՝ Եսթերը լինելով գործունեայ-քայլանթար կին ամուսնու վաղաժամ մահից յետոյ զաւակներին՝ երկու տղայ՝ Գրիգոր եւ Սարգիս, չորս աղջիկ՝ Գուլիգար, Մարիամ, Նագիկ (հանգուցեալներ) եւ Չնար: Եսթեր մեծ նանը այդ դժուար պայմաններում կատարում է նաեւ երեխաների հօր պարտականութիւնը: Ընտանիքի անդրանիկ զաւակն էր Գրիգորը տասնվեց տարեկան հասակում, իսկ եղբայրը՝ Սարգիսը տասնչորս տարեկան, նրանք ընտանիքի հոգսը միասնաբար են կրում:

Պատանի հասակում հանգուցեալ Գրիգորը տան ապրուստն հոգալու համար աշխատանքի է գնում Ջուղա, մի քանի տարի աշխատելուց յետոյ դառնում է տեխնիկ մեքենայի մեքանիկ: Ջուղայից վերադառնալով գիւղ 1947 թ. ամուսնանում է Սրբուհի Պետրոսեանի հետ: Նրանք բախտաւորում են հինգ զաւակներով, երկու տղայ՝ Խորէն եւ Ջաւէն ու երեք դստեր՝ Ալվարդ, Վարսենիկ եւ Քլարիս (Քլարիսը մահանում է 40 տարեկանում մի որդի զաւակ ժառանգ թողնելով ամուսնուն՝ Նորիկին): Քլարիսի անսպասելի մահը մեծ ցաւ ու վիշտ է պատճառում ընտանիքին:

Երբ Սարգիս եղբայրն էլ ամուսնանում է, նկատելով իրենց փոքրիկ հողամասը գիւղում կարող չէր գոհացնել երկու բազմանդամ ընտանիքների ապրուստը, ուստի հանգուցեալ Գրիգորը որոշում է՝ Թեհրան գնալ աշխատելու, փող վաստակելու: Մի քանի տարիներից վերադառնում է գիւղ: Նա նկատելով գիւղի ուսման ոչ գոհացուցիչ վիճակը զաւակների համար, ուստի երկու եղբայրներ մտածելով զաւակների ուսման մասին 1960-ին ընտանիքներով տեղափոխուում են Թեհրան:

Երկու եղբայրներ հանդերձ ընտանեօք ապրում են միասին մէկ յարկում Եսթեր նանի հովանու ներքոյ խաղաղ ու երջանիկ:

Նրանք իրենց բեռնաթափ մեծ մեքենաներով երեսուկ տարիներ տնային գործունէ են աշխատասիրութեամբ, պարտաճանաչութեամբ եւ ընտանիքասիրութեամբ, այդպիսով իրենց կեանքի ապրուստը լաւապէս վաստակում են, զավակներին բարձր ուսման են արժանացնում, նրանց բոլոր զաւակներն էլ ամուսնացած ապրում են բարեկեցիկ եւ պատուաբեր կեանքով: Հանգուցեալ Գրիգորը գոհ եւ ուրախ էր իր զաւակների կեանքով ի մասնաւորի իր Սրբուհի կնոջ ճիգ ու ջանքերից զաւակների դաստիարակութեան հարցում: Չաւակներ-

ըր իրենց ծնողներին պարգեւել են 11 թոռ եւ 12 ծոռ:

Հանգուցեալ Գրիգորի կողակիցը՝ Սրբուհին, սրանից երկու տարի առաջ Նոյեմբերի 21, 2021-ին կեանքից հեռացաւ, հիմա էլ ինք՝ Գրիգորը, 97 պատկառելի տարիքում: Ահա սա է կեանքը, ժամանակաւոր, այսինքն Աստուծոյը զնալու ենք այս աշխարհից, որպէսզի անակնկալի չմտնուենք մահուան վերահաս հանդիպումից պէտք է կեանքը շահել եւ վայելել, այնպէս ապրել, որ բարութեամբ յիշուենք, բարի արարքներով իմաստաւորենք մեր կեանքը: Հանգուցեալ Գրիգորը մէկն եղաւ էն բարեպաշտ մեր եկեղեցու անդամներից, որ իր կեանքը իմաստաւորեց որպէս սրտամրմուռ եւ հոգատար հայր, հայրենասէր եւ ազգասէր, զրակաւորութիւնը սիրող ու փայլալուրդ գիտակից մարդ: Նա 1990 թ. ընտանիքով Ամերիկա է գաղթում, նա ուրախ էր, որ զաւակներով, թոռներով ու ծոռներով ապրում են մի ազատ երկրում:

Նրա բանաստեղծական շնորհքը ծիլարձակում է այստեղ, ոգեշունչ տաղեր է գրում գիւղական կեանքից, որոնցից կարելի է յիշել՝ «Մեր գիւղի կեանքը», «Նուագիչն ու օձը», «Ոսկանի հարկը», «Գարուն օրերս» եւ այլն, բոլորը անգիր ասմունքում էր, նա այդ 97 հասակ տարիքում շատ պայծառ յիշողութիւն ունէր, Աւետիք Իսահակեանի՝ «Ապու լալա Մահարի» պոէմը մէկ շնչով անգիր արտասանում էր եւ բուռն ծափերի եւ զնահատանքի էր արժանանում: Նա հազիւ գիւղական ուսում ունէր, սակայն Աստուած նրան բանաստեղծելու եւ ուշիմութեան շնորհք էր պարգեւել, նա ընթերցասէր էր, հասարակական կեանքով հետաքրքրուած բաժանորդագրուած թերթեր էր ստանում: Նա անդամակցում էր Լոս Անձելոսի Իրանահայ Միութեան, մասնակցում էր միջոցառումներին ի մասնաւորի ուրբաթօրեայ հանդիպումներին միշտ ներկայ էր վայելելով միութենականների սէրն ու յարգանքը: Նա սիրում էր թոռներին եւ ծոռներին, յաճախակի իր շուրջն էր հավաքում եւ միասնաբար հեռուստատեսային հետաքրքրական ծրագիրներով զբաղեցնում էր եւ ուրախացնում նրանց փոխանցելով պապիկ ու թոռնիկ սէրն ու գուրգուրանքը:

Ահա, այս արժանիքներով հայ մարդը, հայրը, պապիկը աչքերը փակեց հանգիստ ու խաղաղ շրջապատուած հարազատներով, համոզուած լինելով իր փոխանցած ազգային դաստիարակութիւնը կը շարունակուի յետնորդների սրտում ու հոգում յիշատակուելով որպէս մի արժանաւոր հայ մարդ իր անմոռանալի բարի արարքներով:

Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի:

Ռ. ԿՈՐԻՒՆ

ԳԱՐԻԷԼ ՄՈԼՈՅԵԱՆԻ ՁՈՅԳ ՅՈՐԲԵԼԵԱՆՆԵՐԸ

Շարունակուած էջ 7-էն

սարակական, մշակութային եւ մարզական):

Օգտաշատ խորհրդակցութիւններէ ետք կը վերակազմուի ՍԴՅԿ Արեւմտեան Ամերիկայի Կուսակցական կառոյցը: Ապա, կը սկսին գործել Յնչակեան կուսակցութեան հովանաւորութիւնը վայելող Նոր Սերունդ Մշակութային Միութիւնը եւ Հայ Մարմնամարզական Միութիւնը: Այս բոլորին մէջ Մոլոյեան կ'ունենայ մեծ դերակատարութիւն որպէս առաջին հիմնադիր ատենապետը Արեւմտեան Ամերիկայի Սոցիալ Դեմոկրատ Յնչակեան կուսակցութեան

1981 թուականի Յունուարին լոյս կը տեսնէ «Մասիս» շաբաթաթերթի առաջին թիւը եւ այդ օրուանէ ասդին Գ. Մոլոյեան մաս կը



Ամենայն Հայոց Հայրապետ Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Ա. Կաթողիկոսի այցը Փասատինայի Յնչակեան Կեդրոն: Ելոյթ կ'ունենայ Գ. Մոլոյեան

կազմէ ՍԴՅԿ օրկանի խմբագրական մարմիններուն ու իր գրութիւնները լոյս կը տեսնեն թերթի տարբեր համարներուն մէջ:

Ամերիկայի մէջ, աւելի քան քառասուն տարիներ Գ. Մոլոյեան ձեռնհասօրէն վարած է պատասխանատու պաշտօններ թէ կուսակցական եւ թէ մշակութային բնագաւառներէն ներս: Ան բազմաթիւ անգամներ ստանձնած է ՍԴՅԿ Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմինի ատենապետութիւնը ու երկար տարիներ եղած է Նոր Սերունդ Մշակութային Միութեան ատենապետը:

1984-ին Գարիէլ Մոլոյեան մաս կազմելով Փասատինայի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Ծխական Խորհուրդին, խումբ մը ուսումնաստենչ եւ հայրենասէր ընկերներու աջակցութեամբ իրականութիւն դարձուցին հայկական ամենօրեայ վարժարան մը ունենալու գաղափարը՝ «Յովսէփեան» վարժարանը այսօր կը նկատուի բարձր մակարդակ ունեցող հայ գաղութի միջնակարգ ուսումնարաններէն մին:

Գ. Մոլոյեան մասնակցած է նաեւ միջ-միութեանական եւ համագաղութային միացեալ ձեռնարկներու կազմակերպումին: Աւելի քան տասնամեակ մը մաս կազմած է «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի ԱՄՆ-ի արեւմտեան շրջանի Խնամակալ Մարմինն եւ 9 տարիներ եղած է Հայ-Ամերիկեան Թանգարանի եւ Մշակութային Կեդրոնի Խնամակալ Մարմնի անդամ, որպէս ներկայացուցիչ Նոր Սերունդ Մշակութային Միութեան ու ՍԴՅԿ-ի:

Գ. Մոլոյեան Հայերէնէ արաբերէնի թարգմանած է լիբանանահայ գրագիտուի Սիրան Սեզայի (Չարիֆեան) «Մեղաւորուիին» վէպը: Ան եղած է նաեւ արաբերէնէ հայերէն բառարանի տպագրութեան խմբագիրը: Թարգմանած է արաբերէնէ հայերէն 16 հատընտիր պատմուածքներ, որոնք լոյս տեսած են «Արարատ Գրական» պարբերաթերթին մէջ:

Նոր Սերունդ Մշակութային Միութեան 50-ամեակին առիթով, 2005 թուականին, Գ. Մոլոյեան արժանացաւ Ամենայն Հայոց հայրապետ Գարեգին Բ.-ի հովուապետական կոնդակին եւ պարգեւատրուեցաւ Ս. Ներսէս Շնորհալի շքանշանով, առ ի գնահատութիւն իր երկարամեայ ազգօգուտ ծառայութիւններուն, ձեռամբ Արեւմտեան Թեմի առաջնորդ՝ Գեղշ. Յովնան Արք. Տէրտէրեանի: Ունի տասնեակ մը այլ պատուոյ գիրեր, տարբեր հիմնարկներու կողմէ:

Իր ունեցած վաստակին համար Մոլոյեան արժանացած է նաեւ ՍԴՅԿ-ի բարձրագոյն՝ «Փարամազի» անուան շքանշանին:

Ամուսնացած է Մարիա Յովակիմեանի հետ, ունի մանչ զաւակ մը՝ Գրիգոր, որ իրաւաբան ըլլալու կողքին կը հետեւի իր հօր օրինակին՝ մաս կազմելով գաղութի ընկերային եւ ազգային-հասարակական կեանքին:

Նման իրագործումներով հարուստ կեանք մը ունեցած է Գարիէլ Մոլոյեան ու ան տակաւին կը շարունակէ իր ներկայութիւնը «Մասիս» խմբագրատունէն ու կուսակցական տարբեր աշխատանքներէն ներս:

Նշելով Ընկ. Գարիէլի ծննդեան 90-ամեակը կը խոնարհիմք իր վաստակին առջեւ ու մեր սրտագին շնորհաւորանքները կը յղենք այս առիթով:

Վարձք կատար սիրելի Գարիէլ. Միշտ մնաս պատուէջի վրայ ու քու բեղուն կեանքդ թող օրինակ ծառայէ մեր բոլորին:

«ՄԱՍԻՍ»

Ամէն Ինչ, Ամէն Մարդ Կարելի է Սպաննել

Շարունակուած էջ 14-էն

կեանքի պաշտպանելու: Ողջոյն անոնց, որոնք այդ արժէքները պաշտպանելու համար գին կը վճարեն բանտախուցերու մէջ, աքսորի մէջ: Անկարելի է մի առ մի թուել

իրենց անունները. յանձինս խորհրդանշան դարձած Սեւահատտին Տեմիրթաշի, Օսման Քաւալայի, Կիւլթան Քըշանաքի՝ քու անունովդ կ'ողջունեմ գիրենք:»

(Արեւմտահայերէնի վերածեց՝ Սեւան Տէյիրմենձեան)

«Լիվերպոլի» Տպալորիչ Յաղթանակը՝ 4:0



Անգլիոյի Փրեմիեր Լիգայի առաջնութեան 21-րդ հանգրուանին «Լիվերպոլը» հիւրընկալեց «Պորնմուտին» եւ յաղթեց 4:0 արդիւնքով: Գերմանացի Յուրկեն Կլոպի գլխավորած խումբէն երկու քական կող նշանակեցին ուրուկուէջի յարձակող Տարուին Նունիեսը եւ փորթուկալացի յարձակող Տիոկու Ժոտան:

«Լիվերպոլը» 48 կէտով կը գլխավորէ մրցաշարային աղիւսակը եւ 5 կէտ առաջ է երկրորդ տեղը գտնուող ախոյեան «Մանչեսթըր Սիթիին», որը մէկ հանգրուան նուազ կատարած է:

«Արսենալ» Խնդիրներ Չունեցաւ՝ 5:0

Անգլիոյ Փրեմիեր Լիգայի առաջնութեան 21-րդ հանգրուանին Լոնտոնի «Արսենալը» հիւրընկալեց «Քրիսթալ Փալասին»: Սպանացի Միկէլ Արտետայի գլխավորած խումբը առաւելութեան հասաւ 5:0 արդիւնքով:

«Արսենալը» 43 կէտով կը գրաւէ աղիւսակի երրորդ տեղը: «Քրիսթալ Փալասը» 14-րդն է՝ 21 կէտ:

«Պայրըն Միւնիխ» Պարտուեցաւ «Վերտերն»



Գերմանիոյ առաջնութեան 18-րդ հանգրուանին ախոյեան «Պայրըն» Միւնխի մէջ մրցեցաւ Պրեմերի «Վերտերն» հետ: Գերմանացի Թոմաս Տուխելի գլխավորած խումբը պարտութիւն կրեց նուազագոյն արդիւնքով: «Պայրըն Միւնիխ» (17 խաղ) 41 կէտով երկրորդն է եւ առաջատար «Լեյքըքսընզին» (18 խաղ) ետ է 7 կէտ:

Երլինկ Յոլանտը՝ Տարուայ Լաւագոյն Ֆութպոլիստ

Անգլիոյ ախոյեան, գաւաթակիր, Ախոյեաններու լիգայի գաւաթակիր, Եւրոպայի սուպերգաւաթակիր, աշխարհի ակումբային ախոյեան «Մանչեսթըր Սիթի» 23-ամեայ նորուեկիացի յարձակող էրլինկ Հոլանտը ճանչցուեցաւ 2023 թուականի աշխարհի լաւագոյն ֆութպոլիստ՝ Globe Soccer Award-ը:

Մրցանակին կը յաւակնէին նաեւ Ջուստ Պելլինկեմ («Ռեալ Մատրիտ»), Քարիմ Պենզեմա («Ալ Իթիհատ»), Քեւին Տէ Պրուչին («Մանչեսթըր Սիթի»), Կիլիան Միսթրալ («ՊՍՅ»), Լիոնել Մեսի («Ինթեր Մայամի»), Վիկթոր Օսիմեն («Նափոլի»), Մոհամէտ Սալահ («Լիվերպոլ»), Կրիշտիանու Ռոնալտու («Ալ Նասր»), Պերնարտու Սիլվա («Մանչեսթըր Սիթի»), Վինիսիուս Ժոնիոր («Ռեալ Մատրիտ»):


Անցած մրցաշրջանին էրլինկ Հոլանտը «Մանչեսթըր Սիթի» հետ մասնակցած է 53 հանգրուան, նշանակած է 52 կոլ:



«Ռեալի» Յաղթանակը՝ 3:2

Սպանիոյ առաջնութեան 21-րդ հանգրուանին Մատրիտի «Ռեալը» հիւրընկալեց «Ալմերիային» եւ առաջին խաղակէսին 0:2 արդիւնքով պարտուեց յետոյ երկրորդ խաղակէսին հասաւ յաղթանակի 3:2 արդիւնքով:

Առաջին վայրկեանին հանդիպման հաշիւը բացաւ հիւրերու պէճիբացի յարձակող Լարշի Ռամազանին, 43-րդ վայրկեանին «Ալմերիայի» առաւելութիւնը կրկնապատկեց սպանացի պաշտպան Էտկար Կոնսալեսը:



Ընդմիջումէն յետոյ Արքայական խումբը կրճատեց տարբերութիւնը: 57-րդ վայրկեանին անգլիացի կիսապաշտպան Ջուստ Պելլինկեմ արդիւնաւէտ իրացուց 11-մեթրանոցը: 10 վայրկեան ետք դաշտի տէրերու երկրորդ կոլը նշանակեց պրագիլցի յարձակող Վինիսիուս Ժոնիորը:

Աւելացուած 9-րդ վայրկեանին յաղթական կոլի հեղինակ դարձաւ սպանացի պաշտպան Տանիէլ Կարվախալը:

«Ռեալը» 51 կէտով կը գլխավորէ մրցաշարային աղիւսակը եւ 2 կէտ առաջ է երկրորդ տեղը գտնուող «Ժիրոնային», «Պարսելոնան» 44 կէտով երրորդն է: «Ալմերիան» վերջինն է՝ 6 կէտ:

Թորեսի Յեթ-Թրիքը Նպաստեց «Պարսելոնայի» Յաղթանակին

Սպանիոյ առաջնութեան 21-րդ հանգրուանին ախոյեան «Պարսելոնան» Սեւիլիայի մէջ մրցեցաւ «Պետիսի» հետ եւ առաւելութեան հասաւ 4:2 արդիւնքով:

Սպանացի յարձակող Ֆերան Թորեսի տուպլէն յետոյ սպանացի Զաւիի գլխավորած խումբը առջեւն էր 2:0 արդիւնքով, սակայն զիջեցաւ առաւելութիւնը: Երկրորդ խաղակէսին «Պետիսին» երեք վայրկեանի մէջ երկու կոլ նշանակեց սպանացի կիսապաշտպան Իսկոն:

Կատալոնական խումբի յաղթական կոլը 90-րդ վայրկեանին նշանակեց փորթուկալացի յարձակող Ժոաու Ֆելիշը: Երկու վայրկեան ետք Ֆերան Թորեսը հեթ-թրիք իրականացուց:

«Եուվենթուսը» Յաղթեց Եւ Բարձրացաւ Առաջին Տեղ

Իտալիոյ առաջնութեան 21-րդ հանգրուանին Թուրինի «Եուվենթուսը» մրցակիցի դաշտին վրայ հանդիպեցաւ «Լեչէի» հետ եւ յաղթեց 3:0 արդիւնքով:

Տուպլի հեղինակ դարձաւ սերպ յարձակող Տուչան Վլահովիչը: Աչքի ինկաւ նաեւ պրագիլցի պաշտպան Պրեմերը:

«Եուվենթուսը» 52 կէտով գլխավորեց մրցաշարային աղիւսակը եւ 1 կէտ առաջ է երկրորդ տեղ նահանջած Միլանի «Ինթերին», որ մէկ հանգրուան նուազ կատարած է:

ՊՍՅ-ն Հասաւ Գաւաթի 1/8 Եզրափակիչ

Ֆրանսայի գաւաթի 1/16 եզրափակիչին ՊՍՅ-ն հիւրընկալեց «Օւլիանին»:

Սպանացի Լուիս Էնրիկէի գլխավորած խումբը յաղթեց 4:1 արդիւնքով: Տուպլի հեղինակ դարձաւ ֆրանսացի յարձակող Կիլիան Միսթրալը: Մրցակիցի բերդը գրաւեցին նաեւ փորթուկալացի յարձակող Կոնսալու Ռամոնը եւ ֆրանսացի կիսապաշտպան Սենի Մայուլուն:

ՊՍՅ-ն հասաւ 1/8 եզրափակիչ:

Մեսին Ու Տի Մարիան Ցանկութիւն Ունին Մասնակցելու Փարիզի Ողիմպիական Խաղերուն

Աշխարհի ախոյեան Արժանթինի հաւաքականի յարձակող Լիոնել Մեսին ու կիսապաշտպան Անխել Տի Մարիան կ'ուզեն մասնակցել այս տարի Փարիզի մէջ կայանալիք ողիմպիական խաղերուն, կը հաղորդէ Direct Sports-ը:

Եթէ Արժանթինի մինչեւ 23 տարեկաններու հաւաքականը նուաճէ ողիմպիականին մասնակցելու իրաւունք, Մեսին ու Տի Մարիան խումբին հետ կը պատրաստուին Փարիզի Խաղերուն:

Ողիմպիական խաղերու ֆութպոլային մրցաշարին կը մասնակցին մինչեւ 23 տարեկանները, սակայն կը թոյլատրուի ամէն խումբի աւելի բարձր տարիքի երեք ֆութպոլիստի մասնակցութիւնը:

36-ամեայ Մեսին եւ 35-ամեայ Տի Մարիան 2008-ի Փեքինի Ողիմպիական Խաղերու ախոյեաններ են:

